

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35րդ ՏԱՐԻ

1886 ՄԱՐՏ 15

ԹԻՒ 3813

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 15 ՄԱՐՏ

ԳՐԱԿԱՆ

Աղգային մեծանուն վիպասան Պ. Բաֆֆի սկսած է «Արձագանք» ի մէջ հրատարակել պատմական վէպ մը, «ՍԱՄՈՒԷԼ», շորհիւթը քաղուած է Հայոց պատմութեան Դ. դարու անցքերէն: Այսօր մեր ընթերցողաց կը ներկայացնենք այդ վէպին իբր յառաջաբան գրուած հետեւեալ յօդուածն, ուր Պ. Բաֆֆի տեսութիւնն մը կ'ընէ պատմական վէպի վրայ:

«ՍԱՄՈՒԷԼ»

Պատմական վէպը մի ժողովրդի պատմական կեանքի նկարագիրն է: Նա պատկերացնում է իւր մէջ թէ որպէս ապրել է եւ որպէս գործել է մի ժողովուրդ, պատկերացնում է նրա բարքը, վարքը, սովորութիւնները, պատկերացնում է նրա մտաւոր ու բարոյական յատկութիւնները, մի խօսքով, ներկայացնում է հնադարեան մարդուն իւր բուն, նախնական կերպարանքով որը ժամանակների ընթացքում փոխուել և ներկայ սերնդի համար մոռացուել էր:

Գրելով «Սամուէլը», ես նպատակ եմ ունեցել ներկայացնել մի այդպիսի նկարագիր մեր պատմական անցեալից:

Պատմական վիպասանին նիւթ է մատակարարում ինքը պատմութիւնը եւ այն յիշատակարանները, որ պահել են իրանց մէջ անցեալի յիշատակները եւ աւանդել են ապագայ սերնդին:

Բայց ի՞նչ է տալիս հայ վիպասանին հայոց պատմութիւնը:

Մենք կարդում ենք նրա մէջ մեր թագաւորների, մեր իշխանների անունները, ծանօթանում ենք նրանց ներքին կռիւների ու արտաքին պատերազմների հետ, գիտենք թէ որը որքան տարի տիրեց, կամ ինչ լաւ եւ վատ գործեր կատարեց, — այդ բոլորը գիտենք մենք: Բայց թէ ի՞նչպէս էր կազմակերպուած նրանց ընտանեկան կեանքը, ի՞նչ սովորութիւններ ունէին, ի՞նչպէս էին հաղնվում, ի՞նչ տեսակ տների մէջ էին ապրում, մի խօսքով, իբրեւ մարդ, նրանց ընտանեկան եւ հասարակական կենցաղավարութեան մասին՝ մեր պատմութիւնը, եթէ չստեմ իսպառ, կարող եմ ասել մեծ մասամբ լռում է:

Բայց վէպի համար հարկաւոր է ընթացիկ, շարժուն կեանք իւր բոլոր երեւոյթներով, եւ ոչ թագաւորների կամ իշխանների աշխարհակալութեան կամ պարտութեան չոր ու ցամաք տարեգրութիւնը:

Մեր պատմութեան մէջ գրեթէ բոլորովին մոռացուած է ամբողջ: Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագաւորներից եւ իշխաններից, բացի հոգեւորականներից եւ զինուորներից, Հայաստանում կար եւ ծաղկաւոր, որ ապրում էր, որ իւր կեանքն ունէր, որ իւր տօները, հանդէսները եւ ցնծութիւններն ունէր եւ որի հոգեկան եւ բարոյական հակումները արտայայտվում էին այս եւ այն հասարակական երեւոյթների մէջ: — Մեր պատմութեան մէջ ժողովուրդ չը կայ. կան միայն տիրապետողներ: Մենք չը գիտենք, ի՞նչպէս էր ապրում հայոց շինականը, ի՞նչ տեսակ յարաբերութիւնների մէջ էր իւր տէրերի հետ, կամ ի՞նչ էր ուտում եւ ի՞նչ էր հագնում, եւ ի՞նչ տեսակ զուարճութիւններ

ունէր: Մենք չը գիտենք, թէ ի՞նչ էր շինում հայոց արհեստաւորը, որ երկիրներէ հետ առեւտուր ունէր հայոց վաճառականը, կամ ի՞նչ տեսակ անասուններ էր սնուցանում հայոց խաշնարածը: Մեր պատմութիւնը լուռ է այդ բոլորի մասին: Բայց վէպի համար դրանք կարեւոր են:

Մեր պատմութեան մէջ մոռացուած է եւ մեր ժողովրդի մի նշանաւոր տարրը— կէռ: Մենք ծանօթ ենք մի քանի կանանց անունների հետ միայն, իսկ նրանց կեանքը իւր բոլոր մանրամասներով մեզ անյայտ է: Ի՞նչ էր հայ կինը, որպէս ամուսին, ի՞նչ էր նա, որպէս մայր, ի՞նչ դեր էր խաղում, որպէս ընտանիքի եւ հասարակութեան անդամ, — այդ մենք չը գիտենք: Մենք չը գիտենք նաեւ թէ ի՞նչպէս էր յայտնվում նա ժողովրդական տօներէ եւ հանդէսների մէջ, կամ ո՞ր աստիճան մասնակցում էր նրա ուրախութիւններին եւ տրտմութիւններին: Իսկ առանց կնոջ վէպ կարող չէ լինել. կինն է նրա ոգին եւ կենդանութիւնը:

Եւ այդպէս, մեր պատմութիւնը, իբրեւ չոր ու ցամաք տարեգրութիւն, խիստ նուազ նիւթ է տալիս մի վիպասանի, որով կարող լինէր նա նկարել անցեալի ճիշդ պատկերը իւր բոլոր երեւոյթներով:

Ինչ որ թերի է թողել պատմութիւնը, կարող էին լրացնել բանաստեղծական գրքուածքները, եթէ մեզ հասած լինէին: Բայց մենք չունենք ոչ Խաբէլէսի եւ Սոփոկլէսի ողբերգութիւնները, եւ ոչ Հոմերոսի եւ Վիրգիլիոսի դիւցազնական հազներգութիւնները: Մեր հին գրականութիւնը դուրս չեկաւ եկեղեցական շրջանակից: Մեր հեղինակները գրեցին մեկնութեան ստուար դրքեր, հռետորական ճառընտիրներ, գրեցին փիլիսոփայական եւ աստուածաբանական աշխատութիւններ, բայց ոչ մի վէպ, ոչ մի դրամա կամ կօմեդիա չը տուեցին մեզ:

Մեր հին գրականութեան մէջ, թէեւ կեանքի եւ սովորութիւնների, ընտանեկան եւ հասարակական կազմակերպութեան լիակատար նկարագիրներ չը կան, բայց կան հազիւ նկատելի նշմարներ, փոքրիկ բեկորներ, որոնք ի մի ամփոփելով, պարզելով եւ զաստորեւելով, կարելի էր, եթէ ոչ բո-

լորովին ամբողջական, գէթ մասնաւոր գաղափար կազմել պատմական հայի կեանքի մասին:

Այդ աշխատանքը պէտք է մեր արդի հանրօրէն գործը լինէր: Բայց մեր հնախօսութիւնը այդ մասին դեռ շատ աննշան գործ է կատարել: Մեր հնախօսութիւնը դեռ չէ դուրս եկել այն նեղ, սահմանափակ շաւղից, ինչ շաւղով որ ընթացել է պատմութիւնը: Պատմութիւնը խօսում է միայն թագաւորների, իշխանների եւ հոգեւորականութեան մասին. հնախօսութիւնը նոյնպէս զբաղւած է նրանցով: Մեր հնախօսութեան մէջ կեանքի քննադատութիւնը, իւր բոլոր երեւոյթներով, խիստ աննշան տեղ է բռնում: Կարգալով Ինճիճեանի երեք պատկառելի հատորները, չէ կարելի մի պարզ հասկացողութիւն կազմել նախաւան հայի կրօնի, պաշտամունքների, սովորութիւնների եւ ծէսերի մասին, — չէ կարելի տեղեկանալ, թէ ի՞նչպէս էր ապրում հայը իւր տան մէջ եւ հասարակութեան մէջ:

Այդ բոլորից յետոյ, ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ ո՞րքան դժուար է հայ վիպասանի համար պատմական վէպ գրել: Թէ հին եւ թէ նոր գրականութիւնը նրա համար բաւականացուցիչ նիւթ չէ պատրաստել: Նա ինքը պէտք է բոլորը ուսումնասիրէ, նա ինքը պէտք է բոլորը պատրաստէ: Բայց ո՞րտեղից:

Արդեօք ունե՞նք մի մուգեւում, որտեղ հայ վիպասանը մոնելով, տեսներ, թէ ի՞նչ տեսակ զգեստ ունէին նախնի հայերը, ի՞նչ տեսակ զարդեր ու զէնքեր ունէին, կամ ի՞նչ տեսակ տնային կարասիք էին գործածում: Արդեօք մենք ունե՞նք մեր հին արձանները, մեր հին նկարները: — Ոչինչ չունենք: Իսկ այդ բոլորը պէտք են պատմական վէպի համար: Եթէ Վօլտեր Սկոտը եւ Էքերսը գրեցին գեղեցիկ պատմական վէպեր, որոնց մէջ իւր բոլոր մանրամասներով պատկերանում է վաղմի մարդու կեանքը, — այդ յաջողութիւնը պէտք է վերաբերել ոչ այնքան նրանց տաղանդին, որքան նիւթերի այն ահագին սլաշարին, որ պատրաստել էր նրանց համար նախընթաց գրականութիւնը: Այդ երջանիկ վիպասաններին մնում էր միայն օգուտ քաղել արդէն պատրաստի նիւ-

թերից: Բայց հայոց դժբախտ վիպասանը ինչ ունի: Նա պէտք է ուժ տայ իւր երեւակայութեանը, իսկ լոկ երեւակայութիւնը մի ճիշտ պատմական վէպ նկարել չէ կարող:

Մեր գրականութեան չքաւորութեան մէջ, անհրաժեշտ նիւթերի պակասութեան մէջ, խոստովանւում եմ, որ իմ կողմից մեծ վստահութիւն էր՝ ձեռնարկել մի վէպ գրելու, որ պատմական ճիշդ նշանակութիւն ունենար: Բայց «Սամուէլը» վաղուց իմ մտածութիւնների առարկան էր դարձել: Խրախուսվելով այն գաղափարով, թէ իրքան մեծ կրթողական ազդեցութիւն ունի պատմական վէպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է իւր նախնեաց մեծագործութիւնները եւ աշխատում է հետեւիլ նրանց առաքինութիւններին, տեսնում է եւ նրանց մոլութիւնները, աշխատում է հեռու պահել իրան նրանց կատարած սըլալներից, — այդ միտքը քաջալերեց ինձ: Ես սկսեցի գրել: Բայց թէ ինչ աղբիւրներից եմ օգուտ քաղել, աւելորդ չեմ համարում բացատրել իմ ընթերցողներին:

Նախ, ես օգուտ եմ քաղել այն յիշատակարաններից, որքան յաջողուել է ինձ գտնել մեր ազգային եւ օտարազգի գրականութեան մէջ: Նրկրորդ, իմ ճանապարհորդութիւնների ժամանակ, ես օգուտ եմ քաղել ներկայ հայի կեանքից, այն չափով միայն, ինչ չափով պահպանուել է նա իւր նախնական ձեւի մէջ: Եթէ մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Քսենոփոնի 23 դար առաջ նկարագրած գետնափոր խրճիթները, եթէ մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Հերոտոլոսի 24 դար առաջ նկարագրած մաշկապատ նաւակները Նփրատ գետի վրա, ինչո՞ւ պէտք է չը մըտածել, որ դեռ չափ քան չէ փոխուել հայոց աշխարհում: Նոր քաղաքակրթութիւնը կարող էր ոչնչացնել, ինչ որ նախնական էր, ինչ որ հին դրօշմ էր կրում: Բայց Հայաստանում դեռ մնացել են այնպիսի խուլ, առանձնացած տեղեր, ուր ժողովուրդը դեռ ապրում է իւր վաղեմի, աւանդական սովորութիւններով: Այդ տեղերը ես առիթ եմ ունեցել տեսնելու եւ նրանց կեանքը ուսումնասիրելու:

Համարելով հայերին մի եւ նոյն ցեղին

պատկանող եւ ոչ այնքան տարբեր կեանքով ասլող մի ժողովուրդ, որպիսի էին հին պարսիկները եւ մետացիները, ես առել եմ շատ բան պարսիկների եւ մետացիների կեանքից, ի հարկէ, զանազանելով, ինչ որ ազգային առանձնայատկութիւն է եւ ինչ որ օտարամուտ է:

Հայոց կեանքի եւ սովորութիւնների վերայ ոչ սակաւ ազդեցութիւն են գործել եւ այն մեծ գաղթականութիւնները որ հին դարերում, կամ ինքնակամ եկել են եւ կամ իբրեւ գերի բերուել են Հայաստանում: Դրանցից մեծ տեղ են բռնել քաղդէացիք, ասորեստացիք, պարթեւները, հնդիկները, ձենացիք եւ հրէաները: Ես ի նկատի եմ ունել եւ դրանց սովորութիւնները:


Այդ բոլորը բացատրուած կը լինի առանձին ծանօթութիւններով, որ կը կցուի գրքի վերջում: Բայց որովհետեւ ծանօթութիւնները համարեա վէպի կէսի չափով տեղ կը բռնէին, այդ պատճառով անյարմար դատուեցաւ «Արձագանք» ի էջերը ծանրաբեռնել ծանօթութիւններով, որ աւելի դիտնական, ժողովրդագրական եւ տեղագրական նշանակութիւն ունէին. — միւս կողմից, ծանօթութիւնների ընթերցումը կարող էր թուլացնել վէպի տպաւորութիւնը:

«Դաւիթ — բէգից» եւ «Պարոյր Հայկազնից» յետոյ, «Սամուէլը» իմ երրորդ գրական փորձն է: Այդ վէպի նիւթը առնուած է մեր պատմութեան ԴԸ դարու անցքերից:

(ԱՐՁԱԳԱՆԿ)

ԲԱՅՅԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շար . նախորդ թուէն)

Նիւ-Եորք Հէրալտի առաջին թիւը երեւցաւ 1855 մայիս 6ին, ստորագրութեամբ ձէյմս Կօրտըն Պէնէթի, հրատարակիչ եւ տնօրէն : Այդ նոր թերթը, որուն փառաւոր ապագայ մը պահուած էր, 16 սիւնէ կը բաղկանար որոցմէ 4ը ծանուցումներ կը պարունակէին . բաժանորդագրութիւնը 15 ֆրանք էր տարին : 1855ին Նիւ-Եորքի մէջ 270,089 բնակիչ կար եւ ամբողջ Մ.Նահանգաց բնակիչներուն թիւն էր 15 միլիոն : Ժողովրդեան ճաշակը, ընթերցասիրութիւնը այնքան զարգացեալ էր որ այն ատենները Նիւ-Եորքի մէջ կը հրատարակուէին 15 ամենօրեայ եւ 42 պարբերականներ յորոց 11ը շաբաթը երկու անգամ եւ միւսները մի անգամ : Թերթ մը միայն 6,000 հատ կը տրուէր . միւսներուն թիւը միջին հաշուով 1,700 ի կը հասնէր . հաղորդակցութեանց միջոցները տակաւին մանկութեան վիճակի մէջ էին, ուստի եւ ձիաւոր ցրուիչներ ամէն կողմ կը վազէին լրագիրները ցրուելու համար : Առաջին երկաթուղին 1831ին հաստատուած էր : ձէյմս Կօրտըն Պէնէթի բոլոր դրամագլուխն 500 տօլարը չէր անցներ, հազիւ 2,500 ֆրանք, եւ այդ գումարով հիմնեց մի լրագիր որուն համար անգամ մը երբ Սթանլի հարցուց թէ ըստոյդ էր որ լրագիրը վաճառել կ'ուզէ, Պէնէթի որդին հպարտանալով պատասխան կուտար թէ « Հէրալտը գնելու չափ հարուստ եւ ոչ մի դրամատէր կը գտնուի Նիւ-Եորքի մէջ » :

Պէնէթի ձեռնարկը թերահաւատներու քրքիշը շարժեց, որովհետեւ ամէն մարդ գիտէր անոր չքաւորութիւնը, այլ Պէնէթ յամառ աշխատութեամբ դրամի տեղը լեցնել ուզեց : Մի եւ նոյն ատեն այս մարդը

քաղաքական յօդուածներ կը խմբագրէր, իւր թերթին բանբերն էր . զաւելտաբան գրագէտ, ինքն էր դարձեալ իւր հաշուետու մարմները բռնողը, լրագրին տնօրէնը . կը վազէր սակարանները, դատարանները, միջնորդներու եւ վաճառականներու տունները, ամէն բան կը հասկնար, ամէն բանի կը հասնէր, եւ կ'ըսէն թէ մէկ տեղէ մը միւսը փոխադրուած միջոցին իւր թերթն ալ կը խմբագրէր գրեթէ ոտքի վրայ, հոս լուր մը, հոն տեղեկութիւն մը քաղելով, եւ աւելորդ է ըսել, բարձ ի թողի առնելով ձեւն կամ պարբերութիւնները . միայն իրողութեան ուշ կը դնէր եւ քանի մը բառով, յստակ եւ կտրուկ, ընթերցողին մտքին մէջ կը զետեղէր գաղափար : Ահաւասիկ իւր ոճը եւ գրելու ձեւը . « Նիւ-Եորք-Էռիէ երկաթուղւոյ ընկերութիւնը կազմուեցաւ . վաղը բահի առաջին հարուածը պիտի տրուի . յուսանք թէ բաժանորդաց գրպանին չէ » :

Նիւ-Եորք Հէրալտ առաջին հրատարակիչն եղաւ սակարանի « ընթացք արժէթղթոց » ի մը : Ամէն տեսակ նորութեանց նման այսպիսի հրատարակութիւն մը ամէնուն ապշութիւն պատճառեց . ո՞վ կրնայ այսօր հաւատալ թէ Նիւ-Եորքցի սեղանաւորները ուժգնակի հակառակեցան ասոր եւ պահանջեցին որ մէկ մ'ալ ցուցակ չհրատարակէ : Պէնէթ ուշ չդրաւ այդ ազդարարութեան եւ միջնորդները ընդունայն զլացան տեղեկութիւններ տալու . Պէնէթ միշտ հնարը կը գտնէր տեղեկութիւն ստանալու : Եթէ չյաջողէր, մտացածին « ընթացք արժէթղթոց » մը կը հրատարակէր եւ ահա դիտողութիւններ կը տեղային . իւր ուզածն ալ այդ էր . այդ եղանակաւ կը ճշդէր իւր ցուցակները եւ « ընթացք » ը կը հասկըցուէր թէ ի՞նչ է : Յամառութեամբ յաղթանակեց ամէն խոչնդոտներու եւ դիմադրութեանց եւ այնուհետեւ իրեն հակառակորդներն եղան իրեն տեղեկութիւն տրուողները :

Սեղանաւորներու հետ « անեցած կռիւներն » հանրութեան ուշադրութիւնը հրաւիրեցին Նիւ-Եորք Հէրալտի վրայ . հրատարակիչը գիտեցաւ օգտուի : Իւր դրամական « ընթացք արժէթղթոց » ը շատ ազատարձակ եղանակաւ մը շինուած ըլլալուն պատճառ

ուս, նպաստաւոր ցատումներ կը գրգռէր, այլ անձնական չափ չունէր պօրոսայի ելեւ-էջներէն. աղքատութիւնը գրաւական մ'էր իւր պարկեշտութեան: Լրագրին ծաւալումը արագացաւ, ծանուցումները սկսան տեղալ եւ հրատարակչին թափուր սնտուկը դրամով լցաւ. Պէնէթ յայնժամ կարողացաւ մի քանի օգնականներ վարձել եւ 20 ցրուիչ աւելցունել. ցայն վայր գոհացած էր 12 մարդով որք ցրուիչի եւ վաճառողի միանգամայն պաշտօն ունէին: Խմբագրութեան հոգեբէն երբ որ քիչ մը թեթեւցաւ, Պէնէթ իւր բոլոր ուշադրութիւնը դարձուց լրագիրը տարածելու, եւ այս նպատակաւ գրքածախներու հետ համաձայնեցաւ, գործակալութիւններ հաստատեց Նիւ - Եորքի մօտ գտնուող քաղաքաց մէջ եւ այս գործակալութիւնը յետոյ այնքան կարեւորութիւն ստացան որ Ատլանտեանէն մինչեւ Խաղաղական Ովկիանոսի եղերքները տարածուելով մեծ հաղորդակցութեան մը միջնորդներն եղան եւ փոքր վաճառահանքերու փոխադրութեան գործն ստանձնեցին:

1835 յունիս 30 ին Լօնտօնի ոստիկանութեան լրտես մը Նիւ - Եորքի փողոցներուն մէջ անհաւատարիմ գանձախափ մը ձերբակալեց, որ Պանքայէն մեծ գումար մը առած փախած էր: Գողը դատաւորին ատենանը կանչուեցաւ ու յետոյ արձակուեցաւ. այս դէպքէն առիթ առնելով Պէնէթ մի յօդուածի մէջ հարցուց թէ կարելի չէ՞ր Անգլիոյ եւ Ամերիկայի միջեւ դաշնադիր մը ստորագրել որպէս զի երկուքէն միոյն մէջ յանցանք մը գործողը կամ ոճրագործը միւս երկրին կառավարութեան յանձնուի, և եօթն տարի վերջը միայն ժամանակին արտաքին գործոց նախարար Վէպսթէր կարդաց եւ վերստին կարդաց ինչ որ Պէնէթ ուղղած էր իւր նախորդին Ֆորսէթի. եւ այդ լրագրին թելադրութեամբ առաջին դաշնագիրն կուեց Անգլիոյ հետ ի մասին տարա-գրութեան յանցաւորաց:

1835 օգոստոս 12 ին հրդեհ մը կասեցուց Պէնէթի գործը. այլ նոյն ամսոյն 31 ին վերստին սկսաւ հրատարակել իւր թերթը, նիւթական եւ բարոյական շատ լաւագոյն պայմաններու մէջ. հրդեհը ծախեց ինչ որ կրնար, բայց Հէրալդ ոչնչացուեցաւ կարող չեղաւ: Առաջին անգամին վեց շաբաթ չէր

անցած 7,000 թիւ տպել սկսած էր. ինն ամիս յետոյ 20 հազարի հասաւ եւ «Այժմ, կ'ըսէր Պէնէթ, 25 հազար թիւ ցրուելու փառասիրութիւնն ունինք: Երբ գործին նոր սկսայ՝ վրաս կը ծիծաղէին, յիմար մը, անխելք մը կոչեցին զիս, զի ոչ դրամագլուխ ունէի ոչ բարեկամ. սակայն իմ նախատեսած արդիւնքներն ու յաջողութիւնը օր մը պիտի դարմացնեն Միացեալ Նահանգները:» Երեսուն տարի ետքը 1871 ին Պէնէթի հարստութիւնը 55 միլիոն ֆրանքի եւ Նիւ - Եորք Հէրալդի եկամուտը 2 1/2 միլիոն ֆրանքի հասաւ. աւելորդ է ըսել թէ այժմ հաւանօրէն այս թուանշաններն ստուար յաւելում կրած են: Այսքան զարմանալի յաջողութեան մը պատճառներն շատ են, եւ գաղափար մը կուտան Ամերիկացուց բնութեան որ կ'ուղէ դէպքերն իրենց նոյնութեամբ գիտնալ, առնել ստոյգ տեղեկութիւններ որոնք մեկնութիւններէ եւ ընդլայնումներէ զերծ, հետեւապէս կուսակցական ոգիով չեն խմբագրուիր: Ար փափաքի որ իրեն թողուի այդ տեղեկութիւններէն հետեւանք. հանելու գործը, չհանդուրժեր որ եզրակացութիւնը տուողը լրագրապետն ըլլայ, եւ կ'ախորժի որ հրատարակութեան մէջ մուտ գտնեն սոսկական կենաց մինչեւ անգամ փորձիկ մանրամասնութիւնները: Արնայ ըսուիլ որ Հէրալդ եւ ոչ մի քաղաքական կարծիք ունի իրեն յատուկ, եւ ամէն կարծիք անդրադարձունելով ինքն՝ և ոչ միոյն կը յարի: Պէնէթ անգաղար ժողովրդական բնադրման ետեւէն գնացած էր. եւ եթէ երբեմն սայթալէր կամ անոր հակառակ ընթանար, իսկոյն կ'ըզար իւր սխալումը եւ ամէն կապանքէ զերծ մարմնոյ մը արագաշարժութեամբ սխալանքին դէմ կը դարձունէր երեսը: Հանրային կարծիք շինելու չէր յաւակնած, այլ ամէն խնդրոյ վրայ ուղիղ ծանօթութիւններ տալ կ'աշխատէր հանրութեան, եւ յաջողելու համար մեծապէս օգտեցաւ շոգենաւին գիւտէն: Ատլանտեան Ովկէանն առաջին անգամ անցնող Միւսսոն շոգենաւը 1838 Ապրիլ 23 ին Նիւ - Եորք հասած էր: Պէնէթ մայիս 1 ին Եւրոպայի համար ճանքայ ելաւ այդ նաւով, եւ ամիս մը չանցած Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Սպանիոյ եւ Իտալիոյ լրագրապետ-

ներուն հետ պայման կնքած էր որ կանոնաւոր թղթակցութիւններ յղեն իրեն: Երբ Նիւ - Եորք դարձաւ, նախ առաջատաւոր յետոյ շոգեշարժ նաւակներ բերել տուաւ իւր հաշւոյն որը կ'երթային բացերը և Եւրոպայէն եկող նաւերէն կ'առնէին նոսակներ, լրագիրներ: Սրբնթաց երկվարներու վրայ հեծած ծովեզրը կ'շտապէին բազմաթիւ պաշտօնաւորներ եւ ծրարներն առնելով կը դառնային խմբագրատունը: Հոն թարգմանիչներու, շարագիրներու բանակ մը մկրատով զինուած անմիջապէս ջարդու բուրդ կ'ընէին զանազան երկիրներէ եկած լրագիրներն, եւ քաղաքական դէպքերու, եւրոպական հրապարակաց արժէքներու թարմ լուրերն անմիջապէս կը գետեղուէին Հերալդի յաւելուածներուն մէջ որը անընդհատ իրարու յաջորդելով կ'ողողէին Նիւ-Եորքի փողոցները, վաճառանոցները, շուկաները: Քաղաքին գլխաւոր լրագիրներն ի զուր գաշակեցեցան Պէնէթի դէմ: Կարծեցին որ միացունելով իրենց կարողութիւններն պիտի յաջողէին զայն ընկճելու: « Լրագրական Գաշակեցութիւն » անուամբ իրենք ալ փոքրիկ տորմիլ մը կադմաւորեցին եւ պաշտօնեաներ ունեցան որպէս զի շուտով կարենան Եւրոպայէն լուր ստանալ եւ Ամերիկա տարածել, բայց անօգուտ եղաւ: Պէնէթի անխռով եւ հանդարտ վարքը, իւր խմբագրատան մէջ տիրող կարգ եւ կանոնը, առատավարձ պաշտօնէից անձնասիրութիւնը՝ յաղթանակն ու յաջողութիւնը միշտ Պէնէթի կողմը կը դրնէին: Երկտրական հեռագրի գիւտէն ետք, երբ ընդծովեայ գիծը ձգուելով Նիւ-Եորք Եւրոպիոյ հետ ուղղակի եւ վայրկեանական յարաբերութեան մտաւ՝ Պէնէթ իւր խմբագրատան մէջ մասնաւոր գիծ մը հաստատեց, կարգադրութիւն մը որ առաջնոյն պէս մեծազորող չէր արդարեւ, այլ նոյնքան մեծածախ գործ մ'էր: Իւր ընթերցողաց անհամբեր հետաքրքրութիւնը գոհ ընելու համար այս մարդը բնաւ ծախսէ չէր խոյս տար, եւ որովհետեւ մեծ գումարներ ունէր ձեռքին տակ, բնականաբար իւր ուսոյնները հոս ալ գերազանցեց: Սակայն Նիւ - Եորք միայն փոքր ասպարէզ մ'էր իւր փառասիրական ձգտումներուն. ուղեց որ իւր թերթն ամբողջ Միացեալ Նահանգաց

մէջ կարգացուի: այլ փոխադրութեան ծախքերն ահագին էին մի օրագրի ոյր դիրքն ամ ըստ ամէ կ'ընդարձակուէր: յետոյ լրագիրն այնպէս մը խմբագրուած էր որ Նիւ - Եորքի բնակչաց պէտքին միայն կը պատասխանէր: Արեւմուտքի ժողովրդոց համար շատ մը ումուլէտ ծանօթութիւններ կային մէջը: Պէնէթ որոշեց անոր շաբաթական մի տպագրութիւնը տալ լրագրին սովորական դիրքը պահելով այսպէս իւր հեռաբնակ ընթերցողաց շահեկան լուրեր պիտի հաղորդէր: Ուրբաթ օրերը կը հրատարակէր այդ շաբաթաթերթը, որ կիրակի առաւօտ կը հասնէր միւս քաղաքները և երկրագործ ժողովուրդին կիրակնօրեայ ընթերցման նիւթ կ'ըլլար: Պէնէթ լաւ հաշուած էր եւ արդիւնքը կատարելապէս պատասխանեց իւր ականալութեան. սակայն փոխադրութեանց եւ հաղորդակցութեանց դիւրութիւնները յետոյ բազմապատկելով Պէնէթ հրաժարեցաւ շաբաթականի մը հրատարակութենէն. բայց քանի մը տարիներ օգտուեցաւ, մանաւանդ որ լրագիրը երկրին ամենէն հեռաւոր արուարձաններուն մէջ տարածուելով ճանչուեցաւ: Օրինակը չկորսուեցաւ տակայն. ինչ բան որ Պէնէթ չէր ուզած շարունակել, ուրիշներն սկսան. գլխաւորաբար Ledger որ շաբաթը մի անգամ կը հրատարակուի քանի մը հարիւր հազար օրինակ:

18. կոմ 28 Փրսնը բաժանորդագինով ինչպէս կը գոցէր Պէնէթ իւր ահագին ծախքը: Այդքան մը վարձ թուղթի ծախսն ալ չէր հատուցաներ. ձեռքէ վաճառումն ալ թէեւ մեծաքանակ այլ տակաւ չէր կըրնար նշանաւոր արդիւնք մը գոյացունել: Հերալդ՝ ինչպէս ամերիկեան ուրիշ թերթերը՝ ծանուցումներով կ'ապրէր: Եւրոպա քիչ մարդ գաղափար ունի թէ ինչ դեր կը խաղայ « ծանուցում » ը Ամերիկայի մէջ. ծանուցումը վաճառականութեան հոգին է հոն: Ամենէն մեծ վաճառականէն սկսեալ ցյետին տանտիկինը ծանուցումի կը դիմէ: Երկչոտ սիրահարը իւր իղձերն ծանուցումով կը յայտնէ՝ եւ լրագրին մէջ կը գտնէ իւր պատասխանը: Ամուսնութեանց համար լրագիրները կամ ծանուցումները ուրիշ տեղերու միջնորդ կանանց գործը կը տեսնեն:

Personal, այս վերնագրով Հերալդի սիւներուն մէջ ծածկանունի, այբբենարանի գրերու եւ կամ լոկ թուանշաններու ներքեւ ամէն առաւօտ կոչու կամ սրտայոյզ տրամներ, կատակերգութիւններ կը կարգան հարիւր հազարաւոր ընթերցողը, այլ միայն զայն հասկցողները կը հասկնան։ Այնչ քան այդ օրագիրները կրնան լաւ տեղեկութիւն տալ երկրի մը վրայ։ Նիւ - Եորքը պէտք է ուսումնասիրել Հերալդի մէջ եւ զարմանալ անոր ըրած յայտնութիւններէն եւ ընկերային կենաց վրայ սիրած լոյսէն։ Մի համբերող մարդ Հերալդի 1869 ապրիլ 13 թուոյն վրայ սա հաշիւն ըրած էր․ 8 սիւն խառն լուր, 38 սիւն ատենախօսութիւնք, թղթակցութիւնք 1օնտօնէ, Փարիզէ, Վիէննայէ, Պէրլինէ, Մատրիտէ, Հռոմէ, Կ․ Պոլսէ, Մէքսիկոյէ, Լիմայէ, Վալպարէյզօէ, Սան - Ֆրանչիսկօյէ, Հօնկ - Գօնկէ, Եօքօհամայէ եւ եւ, եւ վերջապէս 50 սիւն ծանուցում։ Հերալդի այս թուոյն տպագրութեան համար գործածուած Մտառին համարն էր 849,550 եւ թուղթի քանակութիւնը 11 թօնօ, գրեթէ 10,000 քաշ․ ծանուցումներէն եւ ոչ մին 12 ապրիլի այսինքն նախորդ օրուան թերթին մէջ չէր գտնուեր եւ 14ին՝ այսինքն հետեւեալ աւուր Հերալդի մէջ պիտի չտեսնուէր։ Պարունակութիւնը կը նորոգուի ծայրէ ի ծայր ամէն օր։ Միայն գրաշարի եւ տպագրութեան համար օրը 600 տօլար կամ 3,000 Ֆրանքի ծախք ունի, առանց հաշուելու թէ խմբագիրը զատ վարձ կ'ընդունին, թէ հեռագրոց շտաբերուն մի բառը 12 Ֆրանք ու 1/2 կ'արժէ, եւ թէ աշխարհի ամէն կողմը Հերալդ ունի թղթակիցներ որոց կը վճարէ։ Այս ծախքը վճարելէ ետեւ Հերալդիւր տիրոջը կը թողուր 2,700,000 Ֆրանքի զուտ շահ մը նոյն տարին (1869), եւ այս թուանշաններն բաւական են անգամ մը եւս ցոյց տալու թէ ինչ է Միացեալ Նահանգաց մէջ ծանուցումը որ ամէն բան կը վճարէ եւ կը վարձատրէ։ Պայմաններն ամէն քսակի մատչելի են, ասոր համար ամէն մարդ յօժարութեամբ կը վճարէ այդ կամաւոր տուրքը։ Հարուստին ինչպէս աղքատին համար վարձահատոյց չահեցում մ'է ծանուցումը, եւ խնայել կուտայ յոգնութիւններ, տեղափոխութիւններ որք շատ

ծախքի կարօտ են։ Վերջապէս Անգլո - Սաքսոններու պիտոյիցը յարմարապէս կը պատասխանէ, որովհետեւ ժամանակը կենաց կերպան է եւ դրամ այս խնայասէր ցեղին համար։

Միացեալ Նահանգացիք սովորաբար առածի մը պէս կը կրկնեն․ «Յոյց տուր ծանուցումը ընող վաճառականները, ես քեզի ըսեմ թէ որն անոնցմէ պիտի հարստանայ»։ Կան քանի մը մեծ տուններ, Պոսթօնի եւ Նիւ - Եորքի մէջ, որոնք ամէն տարի մեր ամենէն հարուստ Հայերուն ամբողջ հարստութեան հաւասար գումարներ կը ծախսեն միայն ծանուցումներու համար։ «Սաքսէլան ծովը կը նետենք որ Պալէս որսանք» կ'ըսեն այդ մարդիկ սովորաբար։

Պարագաները կ'օգնէին Հերալդի, սակայն պէտք է գիտնալ թէ Հերալդ ալ կ'օգտէր պարագաներէն։ Սան - Ֆրանչիսկօյի հիմնադիրներէն մին իւր թղթակիցն եղաւ, Թովմաս Լաուրին․ հանուած ոսկւոյ առաջին բեկորներն ամենէն առաջ Պէնէթի խրկուեցան, եւ Հերալդ յօդուած մը հրատարակելով այդ գիւտին վրայ, այնպէս վառեց ժողովրդեան եռանդը որ բազմաթիւ գաղթականներու խումբեր դիմեցին դէպի այդ Նոր Էլտօրատօն։ Պէնէթ փութանակի երկրաչափներ և բանբերներ խըրկեց իւր ծախքով, և Սան - Ֆրանչիսկօյի մէջ հանտատեց մի գործակալութիւն որ երկտր տարիներ ազդարարն եւ ուղղիչն եղաւ գաղթականութեան։ 1861 ին երբ դերեջինջ պատերազմը սլացեցաւ, Պէնէթ ոչ միայն իւր պաշտօնակիցներէն այլ կառավարութեանէն անգամ ճարպիկ բրթաւ։ Հարկւորաւոր թղթակիցներ վարձեց, խրկեց հարաւային նահանգները, այլը հիւսիսային բանակին ետեւէն գնացին եւ մէն մի զօրաբանակի մի յատուկ թղթակից դրաւ։ Նիւ - Եորքի հանրային կարծեաց հաւատարիմ արձագանք՝ Պէնէթ նախ եւ յառաջ հարաւայնոց կողմը հակեցաւ։ Երբ պատերազմը սկսաւ, իւր ընթերցողաց ամենաճշգրիտ եւ վերջնական լուրեր հաղորդեց։ Խմբագրատան մէջ յատուկ վարչութիւն մը հաստատեց որուն պաշտօնն էր հարաւային լրագիրներու բոլոր խառն լուրերը քաղել և մասնաւոր նամակներէ, պաշտօնական գրութիւններէ, գաղտնի տեղե-

կազմիրներէ նիւթ առնել: Միայն այս գործին 2,500,000 Փրանք յատկացուց: Balls - Ronի ճակատամարտէն ետքը Հէրալդ մեռեալներու մի ցանկը հրատարակեց որուն թուանշանական ճշդութիւնն այն աստիճան անտգիւտ էր որ Հէրալդի վրայ սկսան կասկածիլ թէ ապստամբելոց համախոհ և դործակից է. վասն զի, կ'ըսէին, « Ինչպէ՞ս կրնայ Հէրալդ ժողովրդեան հաղորդել այնպիսի տեղեկութիւններ զորս պատերազմական պաշտօնատուներն իսկ չէր ստացած դեռ »: Պէնէթ սաստիկ զայրացած լրագիրներու յարձակումներէն՝ պահանջեց որ յանձնաժողով մը կազմուի եւ քննութիւն ընէ: Յանձնաժողովը կազմուեցաւ, իւր գրասենեակները այցեց, հոն քննիչներուն առջեւ դրաւ բոլոր նամակներն եւ լրագիրները, իւր բազմաթիւ թղթակիցներէն ստացած ամէն տեղեկութիւնները, և անոնց աջքին առջեւ կատարել տուաւ ցուցակները պատրաստելու ահագին աշխատութիւնն որուն կը տընէին գիշեր ցերեկ բազմաթիւ պաշտօնեայ: Քննիչներու յանձնաժողովն սքանչացմամբ հասկցաւ ձեռնարկին ինչ ըլլալը, համոզուեցաւ թէ իրօք ճշգրիտ ցուցակներ էին, տեսաւ թէ ինչ եղանակաւ կը պատրաստուէին, ճանչեց իրեն քննած թղթերուն վտերականութիւնը եւ իմացաւ թէ ինչ կերպով կ'ընդունէր զանոնք Հէրալդի տէրը: Յայնժամ պարոն Սթանթօն, պատերազմական գործոց նախարարը, Պէնէթի մի նամակ դրեց որով ցրուեց ոչնչացուց ամէն կասկած եւ հաստատեց իրաց ստուգութիւնը: Առաւմտութիւնն ինքն իսկ այդ նամակաւ իրաւունք կուտար լրագրապետին եւ կը շնորհաւորէր նորա հայրենասիրական վաստակները: Պատերազմի պահուն Հէրալդի շրջաբերումը կրկնապատկեցաւ. ծանուցումներու սիւները չէին պարպուեր: Հիւսիսի եւ հարաւի միջեւ եթէ ոչ միակ այլ գէթ ամենէն ապահով միջնորդն էր ընտանեաց համար որք կամ բաժանեալ կամ տարբեր դրօշներու ներքեւ իրարմէ հեռու կը կենային:

1868 ին Պէնէթ իրեն շահակից ընկեր առաւ իւր որդին որ գործի սկսած օրը տարօրինակ բան մը ըրաւ: Սատովայի ճակատամարտէն անմիջապէս երկու ժամ վերջը Հէրալդ մանրամասնօրէն կը

տեղագրէր եւ կը նկարագրէր զայն եւ քանի մը օր վերջը Պէնէթի որդին իւր Պէրլինի թղթակցէն կ'ուզէր եւ կ'ստանար Այոյոմ թագաւորին արտասանած խաղաղաւէտ ճառին հեռագրեալ պատճէնը: Երբ որ Հէրալդի թղթակիցը հեռագրատուն երթալով Այոյոմ ճառը տուաւ, հոն գտնուող պաշտօնեայն ապշութեամբ երեսը նայելով « Չէք մտածեր, պարոն, ըսաւ, թէ ահագին ծախքի կարօտ է այդպիսի հսկայ հեռագիր մը եւ թէ երկու ժամ հազիւ կը բաւէ բառերն համրելու եւ դինը զրուցելու համար »: — « Հոգ չէ, պատասխանեց Հէրալդի թղթակիցը, նախ հեռագրեցէք, յետոյ բառերը կը համրենք »: Եւ այս ըսելով 50 հազար Փրանք դրաւ գրասեղանին վրայ: Պաշտօնեայն հնազանդեցաւ, յետոյ հաշիւ ըրին, եւ թղթակիցը միայն 35 հազար Փրանք վճարեց Պէրլինէն Նիւ-Եորք ճառ մը անցունելու համար:

1868 ին Հէրալդ Լօնտօնի Թայմսին հետ չափուելու համարձակութիւնն ունեցաւ, իւր հռչակաւոր Սթանլին Եթովպիա խորհրդակց ինչպէս խրկեր էր յառաջագոյն Լիվին-կըսթընի ետեւէն: Սթանլի մեկնեցաւ իբրեւ թղթակից Նաբիէ զօրապետին հետ որ անդլիական արշաւանքի մը կը հրամայէր: Անդլիա Սթանլին իմացաւ իւր զինուոց յաջողութիւնը և Թայմս հրատարակելով Սթանլիի հեռագիրը խոստովանեցաւ որ այս նորօրինակ մարտին մէջ ինքն յաղթուած էր եւ արդարապէս ճանչցաւ թէ Նիւ-Եորք Հէրալդի թղթակիցը իւր թղթակցէն մի քանի ժամ յառաջ յղած էր իւր թղթերը: Այս դէպքը յիշատակելով Շէքսփար լրագիրը Թայմսի պարտութիւնը կը հաստատէր 1868 մարտ 7ին:

Հէրալդի հիմնադիրը, Ճէյմս Կօրտըն Պէնէթ, 1872 յունիս 1 ին մեռաւ: Իւր որդւոյն թողուց 55 միլիոն Փրանքի հարստութիւն եւ թերթ մը յաջողութեան կատարն հասած: Նիւ-Եորքի մէջ մարմնաւորեալ լրագրութիւն կը կոչէին զՊէնէթ, եւ իրօք մին այն մարդոց եղաւ սա որք վաղիւ հասկըցեր էին թէ ինչ անհուն զարգացում պիտի ունենար մամուլը իրենց երկրին մէջ ուր գրեթէ լրագիր միայն կը կարդան: Պաշտօնական ամէն կապերէ ազատ, քաղաքական ամէն կուսակցութեանց անտարբեր,

ոչ ոմանց հետ բարձրանալ ուզեց, ոչ ոմանց հետ վար ինկաւ այս մարդը: Քաղաքական բանաձեւներու ուշ չդրաւ երբէք, մարդոցմէ աւելի ղեղձումները հարուածեց եւ մամլոյ ազատութիւնը ամէն տեսակ ազատութեանց գլուխը դասելով ձէֆըրսօնի խօսքերը կը կրկնէր. «Աւելի կը սիրեմ ապրիլ կառավարութիւն չունեցող երկրի մը մէջ ուր սակայն լրագրիւններ գտնուին՝ բան թէ ուրիշ երկիր մը ուր կառավարութիւն կայ բայց լրագիր չկայ:»

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻԻԼՀՈՒՋԻ ԳՈՐԾԱԽՈՐԱԿԱՆ ԹԱՂԵՐԸ

Ե Ի

ԱՐԵՒ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալները երբ առիթ ունեցայ թուելու Մասիս ընթերցողաց մի քանի օրինակներ այն կարեւոր արդիւնքներէն զոր եւրոպական գլխաւոր աղբիւրը ձեռք ձգած են գործակցական դրութեան շնորհիւ, ցաւելով կը դիտէի թէ խիստ քիչ բան կը մընար ըսելու ի մասին մեր երկրին ուր, ինչպէս ամենուն ծանօթ է, գործակցական միակ ընկերութիւն մը միայն կայ, հիմնուած երեք տարիներէ ի վեր: Կ'ակնարկէի սակայն անցողական կերպով անհատական նախաձեռնութեան մը որ մեծ մըլում տալ կը խոստանայ այս դրութեան ծաւալման մեր երկրին մէջ:

Այդ տեսութենէս ի վեր ամիսներ անցան: Այդ նախաձեռնութիւնն ի սկզբան պարզ ծրագրի մը ձեւին տակ տակաւ առ տակաւ յառաջադիմելով դէպի գործադրութիւն, կը ներկայանայ մեզ այսօր իբր պատրաստ յատակագիր մը մերձ ի կիրառութիւն:

Արեւելեան Տնտեսական Ընկերութեան հիմնարկուն մասնաւոր յայտագրով մը ծանոց թէ բաւական թուով բաժանորդներու մասնակցութեամբ պատրաստ էր գործի

սկսելու ներկայ Մարտի 9 ին: Կը հրաւիրէ միեւնոյն ժամանակ առ հասարակ ամեն բաժնետէր կազմելու ընդհանուր ժողով մը ուր վիճաբանութեան պիտի ենթարկուի ընկերութեան կազմական օրինաց մի ծրագիրը:

Ողջունե՛նք ուրեմն ներկայ տարւոյ դարունը, այլ ո՛չ այնպէս որպէս կ'ողջունէ զայն բանաստեղծը. անհամբեր սպասենք անոր վերադարձին ո՛չ որպէս փառասէր զօրավար մը: Գարնան է որ բանաստեղծը, մարդկային վիշտերը ամոքելու համար, կ'երգէ թռչնոց դայլայլիկը եւ առուակին մըրմունջը. զինուորականը կ'ընտրէ գարնան եղանակը բաղադարելութեամբ համար մարդկութիւնը արեան հեղեղներով: Իսկ, մենք կը գտնենք, ներկայ տարուան գարնան մէջ, ո՛չ առաջնոյն նուիրած վաղանցիկ միսթարութիւնը եւ ոչ վերջնոյն տարօրինակ վերաշինութիւնը. այլ ընդհակառակն աղբիւր մը մշտատեւ եւ դրական բարօրութեան:

Որչա՛փ մեծ բերկրութիւն է մեզ տեսնալ թէ երկրի մը գործոց անձուկ վիճակին մէջ ժիր եւ փութաջան անձնաւորութիւնը արժանի կ'ընեն իրենք զիրենք այն թանկագին հովանաւորութեան որ միակ պատճառ է ամեն օգտակար ձեռնարկութեանց եւ հաստատութեանց արգասաւորման:

Գործակցութեամբ տուն շինելու դադարը առաջին անգամ է որ ծնունդ կ'առնու ի Թուրքիա, հակառակ գտած յաջողութեան ուրիշ երկիրներու մէջ: Եւ եթէ ասկից առաջի տեսութեանս մէջ չը յիշատակեցի այս միջոցն՝ այն էր թէ կը փախաբէի ընթերցողաց ուշադրութիւնը աւելի մասնաւոր կերպով հրաւիրել այն դրութեան վրայ որ մեր աչաց առջեւ կ'առնու իւր կիրառութիւնը:

Գործակցութիւնը բազմաթիւ նպատակներ ունեցած է, մինչեւ իսկ մտաւորական գործառնութիւններ, ինչպէս լսարաններու եւ ժողովրդական մատենադարաններու հաստատութիւնը: Ապահովագրութեան ընկերութիւններ գործակցութեամբ հաստատուած են Միացեալ Նահանգաց մէջ եւ կառավարութիւնն ստիպուած է զանոնք մասնաւոր օրէնքի ենթարկել:

Գալով տուն լինելու ընկերութեանց (Building Societies), ասոնք ալ նման փո-

խաղարձ վարկի դրամատանց, փոխատուութեան ընկերութիւններ են և դրամագլուխնին կը կազմուի ընկերակցաց ամսաբաժիններէն. բայց տարբերութիւննին սա է որ այս ընկերութեանց կողմէ ամեն փոխատուութիւն հողային արժողութեանց վրայ կը կատարուի, որուն հատուցումը տարեկան վճարմանց միջոցաւ կ'ըլլայ: Այսպէսով գործաւոր մը 12 կամ 15 տարուան շարունակ վճարումներէ վերջը կը հատուցանէ իրեն եղած հողային փոխատուութիւնը եւ կ'ըլլայ բոլորովին ազատ տանուտէր մը:

Թէ ի՞նչ կերպով կը բաշխուի հաւաքուած դրամը: — Երբ ամսական վճարմունքներով բաւական դրամագլուխ մը կը կազմուի որով կարենան շինուիլ մէկ կամ երկու տուններ, ընկերութիւնը իւր փոխատուութիւնները կ'ընէ երբեմն տարեւորութեանց միջոցաւ եւ երբեմն ալ վիճակ ձգելով: Այս վերջին միջոցը շատ հանճարեղ է:

Ենթադրելով որ բաժնի մը գինը 5000 ֆրանք որոշուած ըլլայ, երբ այդ գումարը կը վճարուի, անմիջապէս վիճակ կը ձգուի. բաղդաւորը կընդունի ընկերութենէն 5000 ֆրանք այն դաշինքով որ որոշեալ պայմաններու տակ տուն մը գնէ կամ շինել տայ: Բայց չահողն անմիջապէս տէրը չըլլար այդ տան՝ որ մինչեւ ժամանակ մը կը պատկանի ընկերութեան իբր աւանդ. զի կարելի է որ չահողը որոշեալ պայմանաժամին չը կարենայ հատուցանել իւր առ ընկերութիւնն ունեցած պարտքը:

Սովորաբար այս ընկերութիւնները կը գնեն փոքր արժողութեամբ գետիններ որոնց վրայ յաջորդաբար տուններ կը շինեն վճարմանց կարեւորութեանը համեմատ:

Յաճախ դիտուած իրողութիւն մ'է թէ գործաւորները անկարգութեան յոռի սովորութիւններ կ'ստանան մի միայն իրենց բնակութեան վայրին ողորմելի վիճակին պատճառաւ զոր երբեմն գործատեարք ձեռնարկած են բարւոքելու: Իսկ 1850 ին Գաղիոյ կառավարութիւնը իւր կողմանէ կարգեց յանձնաժողով մը գործաւորաց բնակութեանց մէջ մաքրութիւն մտցնելու համար: Այս յանձնաժողովն 1851 էն մինչեւ 1871, այսինքն քսան տարուան մէջ, այցելեց ի Բարիզ 50,000 տուն եւ տրամադրեց 15,000 առողջապահական միջոցներ:

Միւլհուզի մէջ էր որ առաջին անգամ տեղի ունեցաւ ֆորժաւորական խաղերու գրութեան մը ամենայաջող կիրառութիւնը: Իւրաքանչիւր տուն միայն մէկ կամ երկու ընտանիք կրնայ պարունակել եւ ունի պարտէզ մը: Միւլհուզ բաղաժ մ'է Ալզասի մէջ եւ ունի գրեթէ 80,000 բնակիչ:

1855 ին այս քաղքին արհեստաւորաց պետերը հիմնեցին Միւլհուզի ընկերութիւնը որուն նպատակն է կառուցանել տուններ կարելի եղածին չափ քիչ ծախքով եւ փոքր արժէք ունեցող գետիններու վրայ: Այդ տունները առաջին անգամ կը ծախուին մի միայն գործաւորներու կամ արհեստաւորներու: Տուններու գինները կը տարբերին 2100 ֆրանքէ մինչեւ 3700 ֆրանք իրենց ընդարձակութեանը համեմատ: Յիրաւի այսպիսի մեծ գումար մը մէկ անգամէն վճարելը անկարելի ուրիշ ըլլար գործաւորաց եթէ տարեւորութեանց միջոցը հնարած չըլլային: Գործաւորը իբր վճարում մը կուտայ 400 ֆրանք գնման ժամանակ, իսկ մնացեալը կը հատուցանէ ամսական վճարումներով որոնք կը նշանակուին գրեթէ մը մէջ եւ 5 առ 10 շահ կը բերեն իրեն:

Որչափ հրապուրիչ ըլլայ տանուտէր ըլլալը յոյսը, սակայն եւ այսպէս կարելի է որ գտնուէին շատ աշխատաւորներ որք չը կարենային մասնակցիլ այս ընկերութեան եթէ տարեւորութեանց գումարը զօրաւոր եւ հատուցման ժամանակամիջոցը խիստ երկայն ըլլային: Հետեւաբար այս անպատեհութիւնը գուշակելով, ընկերութիւնը ջանացած է կարելի եղածին չափ փոքր ամսավճար մը պահանջել գործաւորին ներկայն չը բեռնաւորելու համար, հաստատելով նմանապէս ոչ այնչափ երկայն պայմանաժամ մը՝ որ զայն չը յուսահատեցնէ: Այսպիսի նպատաւոր կարգադրութեանց շնորհիւ, գործաւորը կրնայ 10 կամ 12 տարուան մէջ վարձուորի վիճակէն ազատելով ըլլալ տանուտէր մը եւ վաճառել իսկ իւր տունը երբ որ կամի, այն պայմանաւ որ տան յարակից պարտէզը որոշեալ նպատակին ծառայելէ կը դադրի:

1877 ին Միւլհուզի մէջ կային 955 կառուցուած տուններ որոնցմէ 3 ը միայն չէին ծախուած. մինչդեռ 1867 ին 800 կառուց-

եալ տուններէն 684 հատը միայն ծախուած էր :

Ահա այն գլխաւոր տեղեկութիւններն որք կը վերաբերին Միւլհուզի ընկերութեան ծննդեան, գործողութեանց եղանակին եւ բարգաւաճման :

Թուրքիոյ հասարակութիւնը անտարբերութեամբ չը կրնար դիտել այսօր տնտեսական կարեւոր յառաջդիմութիւն մը յաբեւելու եւ տարակոյս չկայ թէ ջերմ ընդունելութեամբ պիտի որդեգրէ այս գրութիւնը որ Հոենոսի եղբրաց մօտ արդաստուորելով, երեսուն եւ վեց տարի վերջը կուգայ իւր կիրառութիւնը գտնել Վասիւրի աշխանց վրայ :

Մեր վերոյիշեալ տեղեկութիւնները կիսկատար մնացած կ'ըլլան եթէ ընթերցողաց ուշադրութիւնը չը հրաւիրենք Միւլհուզի ընկերութեան արտադրած բարոյական եւ տնտեսական հետեւանքներուն վրայ :

Գաղիացի տնտեսագէտի մը հետեւեալ գիտողութիւնները նկատողութեան արժանի են . « Հաճելի ընկերութեան մը տէր ընե՝ « լով գործաւորը, կ'ըսէ հեղինակը, Միւլհուզի ընկերութիւնը զարգացուց առտնին « կեանքը եւ հետեւաբար ընտանեաց բարքը : Մաքրութիւնը ծաւալելով՝ զարթոյց « խնայողութեան, կարգապահութեան եւ « տեւականութեան սէրը :

« Այս վերջին տեսակետին մէջ Միւլհուզի գործակցութեան հնարամիտ կարգադրութեան արդիւնաւոր ըլլալուն ամենաշաղկապողոյցը սա իրողութիւնն է թէ « այդ նոր թաղին 720 տուններէն 471 ին « մէջ դեռ կը բնակին առաջին ստացողներ « րը . միայն 29 տուն մէկէ աւելի անգամ « տէր փոխած են : »

Վերջացնելով կը դիտենք թէ գործակցական ընկերութեանց վրայ կատարեալ գաղափար մ'ունենալու համար չը բաւեր միայն աչաց առջեւ ունենալ անոնց յաջողութեանց օրինակները կամ կազմութեան եղանակը . անհրաժեշտ է նաեւ գիտնալ թէ ի՞նչ է այս ընկերութեանց յատկանիշը կամ լաւ եւս ի՞նչ են զանոնք ուրիշ ընկերութիւններէ զանազանող գլխաւոր տարբերութիւնները եւ թէ ի՞նչ է անոնց կացութիւնը օրինաց առջեւ :

Ահա կարգ մը կարեւորագոյն խնդիր-

ներ, որոնց բնութիւնը չը ներեր մեզ այսօր կցել զանոնք վերոյիշեալ տեղեկութեանց : Սակայն կը խոստանանք ընթերցողաց մօտ օրերս վերադառնալ այս խնդրոց բացատրութեանը :

ԳՐ . ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՆՈՒԱՐԴ

ՆՈՒԱՐԴ

1874 թուականն էր, Տրդատ Է . . . մեր պատմութիւնն սկսելէ երկու տարի յառաջ նշանուած էր Նուարդ Զ . . . ի հետ :

Երկու յետահայեաց բառ :

Է . . . գերդաստանն ազգին անանաւոր ընտանիքներէն մին եղած էր ամիրայական եղանակին մէջ . ամիրայութիւնն տակաւ մահացու հարուածներ կրելով Է . . . ընտանեաց պետն, Տրդատայ հայրն, իւր հարստութիւնն շահեցնելու միակ միջոց, բօնսօլիտէ խաղալ մտածեց, վաճառականութիւն չէր կրնար ընել . սեղանաւորութեան նախկին շահերն ոչ եւս կային : Իւր հարստութիւնն իրականէն շատ աւելի կը կարծուէր եւ այսու իսկ թէպէտ լսուած էր թէ Դաւիթ աղա, — այս էր անուն Տրդատայ հօր, — բօնսօլիտէի ձեռնարկին մէջ մեծաքանակ գումար մ'էր կորուսած : Նուարդի հայրն այդ վնասն նորա հարստութեան բաղդատաբար ոչինչ համարելով չէր վարանած իւր աղջիկն Տրդատայ նշանել, երբ սոյն վերջինն իւր հօր միջոցաւ նորա ձեռքն խնդրած էր :

Փոխադարձօրէն զիրար հարուստ կը կարծէին :

Նուարդի եւ Տրդատայ նշանախօսութիւնն, սիրային յարաբերութեան արդիւնք չէր : Տրդատ քսան եւ չորս տարեկան էր, ամուսնութեան տարիքն ունէր . Նուարդ տասն եւ ինն գարուններ բոլորած էր . երկուքն ալ ազնուասիրտ եւ կիրթ : Միմեանց սուսն դուռն ուրեք յաճախած էին նշանախօսութենէ յառաջ : Նուարդ համեստ եւ ազնուական օրիորդի համբաւն կը վա-

յեւէր, եւ Տրդատ զայն իրեն ամուսին որոշելով լաւ ընտրութիւն մ'էր ըրած:

Պորսայի ձախորդութիւններն Դաւիթ աղան վտացուցած ըլլալով, հարսանեկան հանդէսը նշանախօսականին շուտ չը յաջորդեց. այլ ընդ այլոյ սխալ զրոյցներ կը շրջէին այս յետաձգման նկատմամբ:

Սոյն երկու տարուան միջոցին Նուարդի եւ Տրդատայ սրտերն իրար ձանջցած էին. աւելին կայ, զիրար սիրած էին: Երկու տարինե՛ր, դարերու չափ երկայն, արծարծած էին այն կայծն զոր սէրը նետած էր երկու մատաղ սրտանց խորշն, եւ զայն բոցաւորած:

Դաւիթ աղա քօնսօլիտէի առաջին հարուածէն յետոյ իւր դրամագլխոյն մէկ մասն դրամատան մի տոկոսի տուած էր եւ բաւական մեծ գումարով մ'ալ քօնսօլիտէի խաղն կը շարունակէր, այդ ձեռնարկէն նախապէս կրած վնասն գոցելու նպատակաւ: Արդ, նշանախօսութենէն մէկ ու կէս տարի յետոյ, դրամատունն սնանկացած էր, քօնսօլիտէի յատկացեալ երկրորդ գումարն առաջինէն աւելի բարեբաղդ չ'եղաւ, ձախորդութիւնը ժամադրութիւն ըրած էին: Դաւիթ աղա իւր հարստութեան յանկարծական փճանալը տեսնելով՝ յանկարծամահ եղաւ:

Տրդատ միեւնոյն ժամանակ իւր հօր մահն ու հարստութեան փճանալը տեսաւ. Նուարդի համար տածած սէրն այնքա՛ն ընդարձակ տեղ մը կը գրաւէր իւր սրտին մէջ որ իւր հօր վիշտն կրցաւ մոռնալ մանաւանդ Նուարդի խօսքերով. սէրն ալ զօրութիւն մը ունի եւ երբ բաժնեք զայն, կը տկարանայ բաժանեալ մասանց զօրութիւնն:

Տրդատ հօր մահուանէն յետոյ անմիջապէս չէր կրնար ամուսնանալ անշուշտ. սուգ պէտք էր որ պահէր. բայց ո՛չ, նա կ'զգայր թէ սուգ պահելու պարտքէն աւելի, շատ աւելի մեծ պարտականութիւն մը կը ծանրանայր յինքն: Նուարդի հետ ունեցած յաճախակի տեսակցութեանց մէջ երկու սիրազեղուն բերաններ իտէալ մը ունեցած էին, որ ամուսնական երջանկութեան լրումն ըլլալ կը կարծուի. ոլիտի ձանապարհորդէին, եւ ի գին ոսկւոյ շատ բաներ ոլիտի վայելէին. արդ, Տրդատ իւր հարստութեան փճանալը տեսնելով, իւր յոյսերուն փճացումն տեսած էր. բարեկեցիկ վիճակ մ'իսկ ունենալ կատարած էր իւր միտքն, անմիջապէս մերթ կ'ուզար իւր սիրտն յուզել եւ երջանիկ չընէ՛լ զայն, չ'ամուսնանալ նորա հետ եւ իւր երանութենէն զրկուիլ. մարտ մ'էր այն, սիրտն ընդդէմ մտքին, միտքն մարտն ընդդէմ սրտին. ո՛ր կողմն եւ յաղթութիւն պարտութեան դատակնիւն ինք պիտի կրէր. բարոյականութեան սկզբունքներով սնած՝ Տրդատ կ'զգայր թէ խղճին յառաջ պարտական կը մնար եթէ խաբէր կոյս մի, երբ նա այնքա՛ն անձնուէր էր իւր նըկատմամբ. միտքն, զերդ բարոյականութեան փարոս, կը հրաւիրէր զինք ետ կենալ ամուսնութենէ մը յոր յաղթութեան դրօշով ընկճեալ ու ամօթահար այր մը եւ ապագային պատրանաց մատնուած չարաբաստիկ կին մը ցոյց կուտար. ի՛նչ, միթէ Նուարդն թշուառացնել չէ՞ր խել զայն հայրենի յարկէն ուր այնքա՛ն հաճելի խաղաղութիւն եւ հեշտին բարեկեցութիւն ունէր, եւ նետել զայն տնակ մը ուրկէ արդէն հեռացած էր հարստութեան աստուածն, եւ ուր այդ հաճոյից փոխան սիրտ մը պիտի գտնէր միայն սիրող, սիրտ մը որ սիրած ըլլալու գոհունակութեան դէմ, անմեղ կոյս մը անբաղդութեան մատնած ըլլալու դառն գիտակցութիւնն ունի. ամո՛ւլ սիրտ մը, որ զգացմանց բերանացի բացատրութենէն զատ ոչինչ արտայայտութիւն ունի եւ որոյ սէրն իսկ հեղինակութիւն մ'է իրեն դէմ: Անշուշտ տրամաբանական էր այս մտածում, այլ այդ լեզուն յաճախ չը հասկնար սիրտն: Տրդատայ սէրն եւս իւր սեփական տրամաբանութիւնն ունէր. « կը սիրէր՝ հետեւաբար պէտք է որ կարող ըլլար զայն սիրելու: » Երկու տարիներ նորայուսովը սնանկէ յետոյ, իւր սիրոյն վարդենի երազներն մտաբերելէ յետոյ, այն ինչ սիրոյ բաժակն իւր հրակէզ շրթանց հպած՝ զայն յետս մղէ՛լ, հասնիլ սիրոյ խորանին յառաջ եւ շնորհազուրկ ետ դառնալ, չը սիրե՛լ, հնա՞ր էր. կարելի՞ էր հրամայել սըրտին. « Մի՛ զգար, մի՛ սիրեր: »

Նուարդով իւր կեանքն դրախտ մը պիտի ըլլար, իսկ այժմ հայրազուրկ, սիրազուրկ եւ ոսկեղուրկ դժոխք մ'էր այն :

Իայց . . . Տրդատայ սէրն եսական սէր մը չէր . եթէ սիրելու հաճոյքն ունեցած ըլլալու համար սիրած ըլլար զայն՝ իւր ամուսնութեան որոշումէն չը պիտի հրաժարէր բնաւ . այլ ոչ, նա զայն կը սիրէր անձնուէր ու անկեղծ սիրով եւ եղբօր մը առջեւն տաճած հոգածութեամբ . ուրեմն իւր սրտին ծոցին մէջ իսկ պառակտում կար . սիրտն կրեց պարտութիւնն, հետեւաբար նոյն վայրկեանէն Տրդատ որոշած էր :

Տրդատ ազատութիւն ունէր Նուարդի հետ առանձին մնալու, ուստի օր մը ըսաւ անոր .

— Նուարդ, կը սիրեմ քեզ, վստահ ես :

— Կը հարցնե՞ս :

— Կը սիրեմ քեզ, Նուարդ . բնականաբար կ'ըսես մտովի . «Պէտք է որ ամուսնանանք . » այլ ես կ'ըսեմ, կը սիրեմ քեզ եւ պէտք չէ որ ամուսնանանք :

— Ի՞նչ, — բացադանչեց Նուարդ սրբատարօր :

— Լսէ զիս . առաւել քան երկու տարիէ հետէ խօսեցեալ ենք . հարուստ էի եւ զքեզ երջանկացնելու վստահ, եթէ սիրող սիրտ մը եւ բարեկեցութիւն մը ընտանեկան երջանկութիւնն կը կազմեն . գիտես, Նուարդ, թէ հօրս հարստութիւնն անխորհուրդ բաղդախաղով մը եւ գրամատան մը սնանկացմամբ փճացաւ, աղքատութիւնն պատած է զիս, աղքատութիւն մը որոյ թշուառութեանց վրայ կ'աւելնան անցեղոյն կորստեան դառնութիւնն եւ ներկային տխուր հակապատկերն . դժբաղդ եմ, չեմ ուզեր զքեզ միասին դժբաղդացնել, զի կը սիրեմ զքեզ, կը հասկնամ, Նուարդ . երկար խորհեցայ, — չարչարանօք լի՝ խորհրդածութիւն, — իմ ձեռքս չը պիտի մատնեմ քեզ թշուառութեան, չը պիտի ամուսնանանք, Նուարդ, մեր կեանքն կամ լաւ եւ կեանքդ դժոխք մը չը դարձնելու համար, թէպէտ սոյն հրաժարումս մահու չափ ծանր ըլլայ ինձ համար . . . Նուարդ . . .

— Տրդատ, — ըսաւ Նուարդ դողդոջ ձայնիւ մը, եւ քանի մը վայրկեան լռելէ յետոյ արտասուօք, — Այն խօսքերն զորս մեր ամուսնութեան նկատմամբ արտասա-

նելու անիրաւութիւնն ունեցար, մտածել կուտան ինձ թէ չես ձանձցած դեռ այն սիրտն որ քեզ համար տրոփելէ չէ դադարած եւ որոյ միակ առարկայն ես : Զէի սպասեր այդպիսի արտայայտութեան մը որ փափկասրտութեանս դէմ նախատինք մը եւ սիրոյս դօրութեան դէմ կասկած մը կը նկատեմ . սիրտն զսիրտ կրնայ սիրել . ազահութիւնն է որ դանձ կը սիրէ . ոսկեղից չէ գանձդ, ոսկեղէն է սիրող զոր պիտի սիրեմ ցորչափ զգայ եւ իմ սիրտս . այլ ի՞նչ հարկ երկարել . երդուի՛ր, Տրդատ, երդուի՛ր — դոչեց ուժգին, իւր դէմքն ցասման հանդամանք մը առած, սեղմելով Տրդատայ ձեռքն — երդուի՛ր որ յաւիտեան պիտի սիրես զիս եւ մարդկային հնարքներ չը պիտի զօրեն քակել հանգոյց մը որ բռնութիւնն է կապած . ծնողացս կամբը չը պիտի կրնայ բաժնել զիս ի քէն եւ . . .

Տրդատ ընկճուած էր, գլուխն խոնարհած ունկնդրած էր . վեր առաւ գլուխն քանի մը վայրկեանի լռութենէ մը յետոյ, եւ ըսաւ .

— Նուարդ, բաւ է, կրենք ճակատագիրն, խաչ թէ պսակ, կրենք, սիրենք . . .

Տրդատ Նուարդէն բաժնուելէ յառաջ՝ Ս. Էֆէնտիին ներկայացաւ . այն վերջինն է . . . դերդաստոնին մէջ տիրած աղքատութիւնն նշմարած էր ի վաղուց . չէր օժտուած այն հազուադէպ առաքինասիրութեամբ որով Տրդատն, իւր ասպագայ փեսայն, իւր գործոց մէջ առնէր . մտածած էր թէ աղքատ անձի մը զաւակ տալ զայն թշուառութեան մատնել է . այս ալ հաշիւ մ'էր : Անուղղակի ճնշումն սկսած էր աղջկան վրայ եւ պաղ ընդունելութիւն մը Տրդատայ դէմ : Վերջնապէս խնդիրը պէտք էր բանալ Տրդատին, ուստի կանչել տալով զայն ըսաւ Ս . . . Էֆէնտիի .

— Տղաս, կը տեսնեմ որ հօրդ գործերն ձախորդ գացին . ընտանիք մը պահելն դիւրին չէ . ամեն բան դրամով կ'ըլլայ . մինչեւ որ դրամական վիճակդ կարգադրես, մեր դիտաւորութիւնն է ձեր նշանախօսութիւնն խզել . այսչափ ըսեմ միայն որ աղջիկս տալու միտք չունիմ . . . տուններնիդ դրաւի տակ է եւ պարտքերդ չատ են : Այս ըսելով աղքատութիւնդ կշտամբել չեմ ուզեր, տղաս, սակայն սա իմացնել միայն թէ աղ-

Ջիկս չը պիտի տամ, խոստովանելով հանդերձ թէ խիստ բարի տղայ մ'ես :

— Հօրս յիշատակին . . .

— Ամեն խօսք ոչինչ են, աղջիկս չեմ տար, պարզ է այս, այնպէս չէ :

— Խիստ պարզ, միայն թէ հայր մը եւ աղջիկ մը տարբեր կամք կրնան ունենալ, գիտցէք, Ս . . . Էֆէնտի, — ըսաւ Տրդատ եւ շտապաւ մեկնեցաւ, առանց Նուարդի հօր ժամանակ թողլու որ պատասխանէ :

Տրդատ երեկոյին միայն իւր տուն մը տաւ եւ առաջին գործն նամակ մը գրել էր առ Նուարդ . մօտեցաւ գրասեղանին եւ ահա նամակ մը տեսաւ իւր անուան, բացաւ զայն, կարդաց .

« Տրդատ ,

« Հօրս վերջին յայտարարութիւնն յուս-
« զած ըլլալու է բեզ, այլ մի՛ յուսահատիր .
« գիտես թէ ծնողացս դէմ չեմ կրնար ան-
« սաստել . գիտես նաեւ թէ չեմ կրնար
« ինքզինքս զբեզ սիրելէ արգելուլ . մեր
« նշանախօսութիւնն խզեն իսկ, մեր սրտերն
« չը պիտի խզեն . աղքատութեան ամբաս-
« տանութեան (' . ') ներքեւ ես, աշխա-
« տէ, Աստուած օգնէ բեզ, եթէ ներսիակ-
« եալ յղած մատանիներս եւ գնդասեղս
« կարենային դէթ մասամբ մեղմացնել աղ-
« քատութիւնդ, երջանիկ կը համարէի ինք-
« զինքս :

Քոյդ

ՆՈՒԱՐԴ »

Երիցս կարդաց նամակն եւ դառն ժպիտ մը եկաւ իւր դիմաց վշտակիր հանգամանք մը տալ . այդ գոհարներու նուէրին մէջ կը տեսնէր նա սիրտ մը, գոհարներուն նման սիրտ մը եւ չ'զգածուիլ չէր հնար . . . :

Վեց ամիսներ անցան եւ այդ ժամանակամիջոցին շատ նամակներ փոխանակուեցան . Տրդատ, հայ ականաւոր սեղանաւորի մը դրամապահն էր . ստացած թուղակներէն խնայողութիւններ ըրաւ, այլ իւր պարտքերն չը կրցաւ վճարել եւ ոչ ալ հայրենի տնակն գրաւէ ազատել . հօրեղբարց դիմեց, նոցա սիրտն գթութեան ձայն չէր ձանձնար . բարեկամներ աւելի գթօտ չէին : Կը սիրէ՛ր դեռ : Իւր գործատէրերէն չէր կրնար փոխառութիւն մը ընել, զի երբ գիտցուէր թէ ինք պարտուց ենթարկուած էր, անշուշտ ոչ եւս իրեն կը վստահէին

դրամապահի պաշտօնը եւ իւր ամսական թոշակէն կը զրկուէր . սակայն օր մը յանկարծ գաղափար մը յղացաւ . այն փոխառութիւնն զոր իւր տէրերէն չէր կրնար բացայայտ խնդրել՝ կրնար դադարեցնել իւր պարտքերն հատուցանելու համար, եւ յետոյ տակաւ, խնայողութեանց շնորհիւ, առ դրամարկն ունեցած պարտքն վճարել : Անգամ մը որ ոչ եւս իւր պարտուց լուծը կրէր, Նուարդն իրեն չը պիտի մերժէին, զի խօսեցեալն դրած էր իրեն . « Իմ անուղղակի թախանձանացս վրայ՝ հայրս ըսած է մօրս (որ շատ կ'աշխատէր զինքն մեր ամուսնութեան հաւանեցնել .) « Գէթ պարտք չունենար այսքան չէի հակառակեր : » Ուրեմն պարտքերն վճարելով՝ բաղձացեալ նպատակին պիտի հասնէր եւ եթէ յոյսն իրականանալէն վերջը՝ յայտնուէր իսկ իւր փոխառութիւն, մտադրած էր աշխարհի ամենէն տաժանակիր չարջարանաց ենթարկուիլ, այլ վճարել զայն : Ագնիւ տղայ մ'էր նա :

Ամեն դիւրութիւն ունէր, որոշեալ դուստրն դրամարկէն վերցնել դժուար գործ չեղաւ : Փանի մը օր յետոյ պարտքերէն թեթեւցած էր, սա փոխարինութեամբ որ միւս եւս պարտք մը ծանրացուցած էր իւր խղճին վրայ . վստահութեան զեղծում մ'էր այն վերջապէս :

Նամակ մը ընդունեցաւ Նուարդէն յոր գրած էր նա . « Հայրս խմանալով որ պարտք չունիս այլ եւս, ըսած է թէ չը պիտի ընդդիմանայ ըանի որ գործերդ լաւ ձամբու մէջ են : »

Քիչ ատենէն Ս . . . Էֆ . հարսանեաց հաւանութիւն տուած էր : Երկու նորածիլ սրտանց մէջ յոյսն, զերդ առկայծեալ կանթեղ մի, մէկէն փայլիլ սկսաւ . այլ ոչ, Տրդատ խղճի խայթ մ'ունէր . ինչ դառն է բերկրանք մը ունենալ ի սիրտ եւ վրդովում մը ի միտս :

Երեք տարիներէ վերջ, երեք օրեր միայն կը բաժնէին Տրդատայ եւ Նուարդի հարսանեաց օրն :

Ամուսնութեան այս լուր օրուան խընդիրն էր հասարակութեան մէջ . զրոյցներ կը շրջէին : « Ի՞նչպէս Ս . . . Էֆ . հաճած էր վերջապէս իւր աղջիկն Պ . Տրդատայ տալ,

որ հարստութիւն չունենալէ զատ պարտք ալ ունի՝ կ'ըսէին. այս հարցն էր որ հասարակութիւնը կը հետաքրքրէր։ Այս տարածայնութիւն հասաւ մինչեւ Տրդատայ տեարց ականջն. այս լուր ծանրակշիռ պարագայ մ'էր իրենց համար. դրամասպահին պարտքեր ունէր եւ զայնս քիչ ժամանակէն վճարած էր. մտածութեան կէտ մ'էր այս. ամեն արժանի վստահութիւն ունէին Տրդատայ վրայ, սակայն համարատուութիւն մը պահանջելով լաւ ըրած կ'ըլլային. մարդ ոչինչ կը կորսնցնէ խոհեմութեամբ վարուելով։

Վերջապէս հաշուետուութիւն պահանջուեցաւ իւրմէ։ Այնքան անհնարին անգարեկամաբ լսեց այդ հրաւէր՝ զի ոչ իսկ արտաքին ձեւով մը յայտնեց իւր վրդովումն. արձանացեալ մնաց։ Հաշիւ կը պահանջուէր իւրմէ. դրամարկէն մեծաքանակ գումար մ'առած էր. կրնա՞ր առարկել թէ յետս դարձնելու դիտաւորութեամբ փոխառութիւն մ'էր ըրած, — ոչ. կրնա՞ր անմիջապէս հատուցանել այդ փոխառութիւն, — դարձեալ ոչ. յայտնապէս գող մը պիտի հռչակէին զինք, եւ սակայն գող չէր ինք. Նուարդն գողի մը հարսն չը պիտի ընէին անշուշտ, պաշտօնէն պիտի արտաքսուէր, եւ ո՞ր կրնար պաշտօն դնել գողութեան դատակնիքն կրելէ յետոյ. եւ իւր պատիւնն...

Ամեն յոյս պատրանք դարձած էր եւ ամեն ցնծութիւն ողբ։

Փրկութեան միջոց մը կար. կրնար ինքզինք ապագային ամօթէն եւ թշուառութեան քառսէն փրկել։

Հիւանդացաւ. Նուարդ զառաջինն հասաւ նորա մահճին քով։

— Նուարդ, գոհարներդ, — ըսաւ մատաններն ու գնդաւեղն երկնցնելով անոր, շնորհիւ Աստուծոյ պէտք չունենայ անոնց. այնքան շնորհակալ եմ որքան երբ զայնս գործածած լինէի, ազնիւ ես. տկարութիւնս ոչինչ է... երջանիկ ենք... կիւրակէ պիտի պսակուինք։ — Եւ մտովի ըսաւ՝ «Երկնից պսակով»։

Նուարդ, Տրդատայ սոյն միճակն տեսնելով, թէպէտ ոչ բնաւ ծանր, յուզուեցաւ. խելացի աղջիկ մ'էր, կրցաւ զսպել ինքզինք եւ յուսադրական խօսքեր ընել. բաժնուեցան ի միմեանց. միոյն սրտէն յոյսն յաւէտ

հեռացած էր, իսկ միւսինին մէջ սակաւ ինչ խռովեալ։

Յաջորդ առաւօտն էր. արեգակն լուսաւորած էր Տրդատայ տունն այն պահուն յորում Տրդատայ կեանքն խաւարեր էր... բարոյական մահէն յետոյ Փիղիքական մահուան դէմ խիզախել դժուար դործ չէր եղած իրեն համար. ինքզինք սպաննած էր, թոյնով։

Ոչինչ թողած էր, նամակ մը միայն առ Նուարդ։

«Մնաս բարեաւ, Նուարդ, ճակատաւ... գրին դէմ մաքաւիլ ի զուր է. ամօթաւ հար սարիլ չեմ սիրեր. սիրոյդ քաղցրութեամբ չը յագեցնալէ վերջ՝ թոյնի դառ... նութեամբ վերջ կրնամ տալ կենացս. մոռցիր զիս...»

Քոյդ

ՏՐԴԱՏ»

Նուարդ արտասուեց։

Որոշեց չամուսնանալ։

Սեւ սեւ օրեր անցան, մեղամաղձոտ ժամեր սահեցան Նուարդի կեանքէն. իւր սրտէն թռած հառաչներ միայն կը խօշէին իր սենեկին տխուր լուութիւնն. ամեն հառաչ որ կը մեկնի հոգիէն, բան մը կը տանի իւր հետ, մինչեւ որ ոչինչ թողու հոգւոյն՝ առանց որոյ մարմինն է անկենդան։

Մեղամաղձոտ լուութեան մը մէջ զուարթ սիրտ մը կարելի չէր ունենալ։

Տկար էր։

— Ի՞նչ պիտի ընենք, — կ'ըսէր Ս... էֆէնտին իւր կնոջ. — հարուստ գեղեցիկ երիտասարդներ կը մերժէ, մեր խօսքերուն չանսար. տէր հայրը տեսայ, եւ պատասխանեց թէ, «Ի զուր է, օրհնած, աղջիկդ համոզուելու միտք չունի. որոշեր է որ աշխարհը չը պիտի մտնայ, թող Աստուծոյ կամքն ըլլայ»։

— Աշխարհը չը մտնայ. եթէ խնդիրն աղով վերջանայ՝ լա՛ւ, բայց երբ հետեւանքներն կը մտածեմ... կը պատասխանէր Տիկինն։

Այս եւ այսօրինակ խօսակցութիւն մ'էր որ յաճախ տեղի կ'ունենար Նուարդի հօր եւ մօր միջեւ, եւ յորում ստէպ Ս... էֆէն կ'ամբաստանուէր իւր կնոջմէն ժամանակին Տրդատի մասին մեծ բծախնդրութիւն ցոյց տուած ըլլալուն համար եւ ի պատասխանի Ս... էֆէն կ'ըսէր միշտ «Ամեն բան դրա-

մով կ'ըլլայ, կարօտ տղու աղջիկ չէի կրնար տալ :»

Սակայն Նուարդի առողջութիւնն օր ըստ օրէ չէր բարուրեք, ընդհակառակն կը վատթարանար, մինչեւ որ տան բժիշկն, Տըթ. Ն. Փ., բժշկական խորհրդակցութեան մը պէտքն զգաց :

« Պատուոյս վրայ խօսք կուտամ ձեզ, որ մտիկ չը պիտի ընեմ ձեր խորհրդակցութեան մէջ տեղի ունեցած խօսքերն » կը պատասխանէր Նուարդի մայրն առ տան բժիշկն, երբ երեք բժիշկը սենեակ մի առանձնացած էին հետեւեալ օրն ի խորհրդակցութիւն, եւ Տր. Ն. Փ. վախճալով թէ մի գուցէ տիկինն լսէ իւրեանց խօսակցութիւնն, կը հրաւիրէր զայն որ սենեկին դռան առջեւէն հեռանայ :

Քառորդ ժամ վերջը Տիկինն գրեթէ խելակորոյս « Վիճակը ծա՛նր է » գոչեց և սենեկին դռան տակ ինկաւ գրեթէ շնչաւառ : Լսած էր բժշկաց խօսակցութիւնը :

Տիկինն պատուոյն վրայ խօսք տալէն վերջը, Տր. Ն. Փ. ապահով թէ ոչ որ կը լսէ իւրեանց խօսակցութիւնն, սենեակ մը տած էր դռան առաջ ձգելով զայն . իսկոյն դուրս գալ փութաց, բոլոր տնեցիք երկվայրկեանի մը մէջ հաւաքուեցան տիկնոջ շուրջն ի լուր իւր ճշոյն . անմիջական խնամքներու շնորհիւ Նուարդի մայրն սթափեցաւ, եւ տան բժիշկն առիթ գտաւ ըսելու .

— Եւ սակայն ձեր պատուոյն վրայ խօստացաք ինձ մեր խօսակցութեանց մտիկ չընել :

— Աւա՛ղ, աղջիկս պատուէս շա՛տ կը սիրեմ . . . պատասխանեց տիկինն տխրութեամբ :

Ս . . . էֆէնտի, բժշկական խորհրդակցութեան արդիւնքն իմանալու համար փութաց բժշկաց մօտ, եւ հիւանդին վիճակն հարցուց անհամբեր :

— Պիտի ջանանք, պատասխանեց բժշկաց մին . այսօր գէշ է, վաղը աղէկ կըրնայ ըլլալ, այսօր աղէկ է, վաղը գէշ կըրնայ ըլլալ :

— Դրամով չէ՞, բանի մը բժիշկ ալ առէք ձեզ հետ . . . ըսաւ Ս . . . էֆէնտի իմանալով բժիշկին վերոյիշեալ խօսքն որ հակառակ երկար ըլլալուն, ոչինչ հասկցու-

ցած էր եւ այսու իսկ հեռի էր յուսադրական ըլլալէ :

— Դրամով աշխարհիս բոլոր բժիշկներն ալ կրնանք բերել, էֆէնտի, բայց ձեր աղջկան վիճակն ծանր ըլլալէ չը դադրիր, — պատասխանեց բժշկաց մին, որ յախուռն ըլլալ կը թուէր, եւ ներեցէք որ ըսեմ, քիչ մ'ալ կոչտ :

Նուարդի վիճակն ծանր չէր . բժիշկը սխալած էին . միայն դատապարտուած էր նա հիւանդ ապրելու :

Դալինոտ էր Նուարդ, թշուառ, եւ Ս . . . էֆ. կ'զգար թէ ինքն էր սլաճառ . իրմէ կախումն ունեցած էր Տրդատն իւր աղջկան փեսայ ընդունիլ, եւ սակայն հաճած էր յայդմ . — ո՛չ :

Խղճի խայթ մ'ունէր Ս . . . էֆէնտի եւ չարաչար կը տանջուէր :

Վիսպասանք յաճախ մօր սիրոյ դօրութեան վրայ խօսած են . հօր մը սէրն ալ դժուար չէ երեւակայել . որքան նորա սիրտըն անառիկ ամբողջութիւն մը եղած ըլլայ մարդասիրական զգացմանց դէմ, նոյնպէս զիւրառու յարդէ բերդ . մ'է որդիական բնազդական սիրոյ առջեւ . Ս . . . էֆ. իւր ձեռք տառապանաց մատնած էր իւր աղջկին, գիտէ՛ր զայդ . . .

Բազմիցս կրկնած էր ինք . « Առանց դժբաժնի բան չըլլար . » բայց այժմ կը տեսնէր որ « Ամեն բան ալ դրամով չըլլար » երբ բժիշկն կը պատասխանէր որ՝ « Դրամով աշխարհիս բոլոր բժիշկներն ալ կրնանք բերել, էֆէնտի, բայց ձեր աղջկան վիճակն ծանր ըլլալէ չը դադրիր » :

Ամեն զոհողութիւն ընելու պատրաստ է նա, քաւելու իւր յանցանքն, այլ կը կարծէ թէ արդէն շատ ուշ է . չը գիտեր թէ Նուարդի վիճակն այնքան ծանր չէ որքան բժիշկը կարծած են . Նուարդի չափ թըլուառ է, թերեւս աւելի :

Անբուժելի է Նուարդի փստն . կեանքն վտանգի ենթարկուած չէ . պիտի ապրի, չարչարանօք . բժշկաց պոտուկիրանօք յաճախ կը գնայ ի պտոյտ, ի գերեզմանս :

Անշուշտ Նուարդի պէս երիտասարդ աղջկան մը սիրոյն համար չէր որ կ'ըսէր Շիլլէր . « Երիտասարդի մը սէրն յարդին բռնկելուն կը նմանի, ոյր բոցերն կը ցայտեն ճարճատմամբ . այլ շուտ կը չիջանին » :

Երկոտասաներորդ տարին է Տրդատայ մահուան, այլ երկոտասան ժամեր չեն անցած յորում Նուարդ նորա վրայ մտածած չըլլայ:

... Գիւղի գերեզմանատան մօտ բնակիչը յաճախ կը տեսնեն սեւազգեստ աղջիկ մը, մերթ կուգայ նա ի գերեզման, տապանաքարի մը վրայ ծաղկեպսակ մը կը դնէ, կը ծնրադրէ, կ'աղօթէ, կը մեկնի:

Տրդատի տապանաքարն է. այն աղջիկն Նուարդն է:

Տրդատայ նախորդ տեսարը, համոզուած են թէ խեղճ տղան պատուաւիրութեան զոհ մ'է եղած. նորա տապանաքարն իւրեանց ծախիւք կ'առուցուած է. կ'ողբան զայն, այնքան փոքր է իրենց հասուցած վնասն, որքան մեծ է իւր կեանքի կորուստը. կ'ողբան, եթէ այս բան օգուտ մը ունի Տրդատայ ոսկերց:

Նուարդ մերթ կը թղթակցի իւր մանկութեան գաղղիացի ուսուցչուհւոյն հետ, Հետեւեալ տողերն թերեւս աւելորդ չըլլայ քաղել իւր մէկ նամակէն.

«Աւելի լաւ կ'զգամ ինքզինքս... Սիրեւն իսկ յանցանք է մեր մէջ, հաւատարմութիւնն իսկ ինչո՞ւ Տրդատայ չիրմին վրայ պսակ կը դնեմ, մեղադրանաց արժանի չե՞մ:»

Եւ ի պատասխանի գրուած նամակի մը հետագայ տողերն անկարեւոր չեն:

«Ծաղկեպսակ մը մեր սիրելեաց չիրմին վրայ՝ սիրոյ արտայայտութիւն մ'է այդ որ կենդանի կը պահէ ի մեզ յիշատակն մեր անկենդան սիրելեաց. եւ քանի՞ն այսպանելի է թողուլ մեր ազգականներն աննշան հողակոյտի մը խորչն ոտնակոխ եւ տղմուտ. հողակոյտ մը որ յետ սակաւ պուրց կը լինի հողահաւասար եւ անհետ: Միթէ ի հնումն թանկագին սափորներու մէջ չէին պահեր աճիւնն իւրեանց սիրելեաց:»

Նուարդ այսու թղթակցութեամբ կ'ըզբօսնու եւ եթ իւր տխրութեան մէջ:

Սեւ զգեստ կը կրէ միշտ. Աստուծոյ միայն ընծայած է այն սիրտը զոր Տրդատայ նուիրած էր. աչերն անոր սիրոյն յիշատակէն ուրիշ սիրով չեն վառիր. երկիւղած է. նորա հոգւոյն համար կ'աղօթէ. կոյս է, պիտի մնայ:

Տ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԽԱՅԹՈՒԱԾ ԱՂԶԻԿՆ

(ԳԱԻԱՌԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)

Մշոյ Թարգմանչաց վանքի արեւմտեան կողմը կը գտնուի բարձր եւ սրածայր մի լեռնադագաթ «Ծիրն - Կատար» անուամբ՝ համբաւաւոր իւր վերայ բուսած անդարար եւ օգտաւէտ բանջարեղինօք: Դաշտային բնակիչը, ընդ որս նաեւ քաղաքացիք, ամէն տարւոյ յունիս ամսոյ մէջ յիշեալ լեռնադագաթին կը դիմեն՝ ոմանք, ձեռք բերուած կանաչեղէնները ծախելով մի քանի դահեկան վաստկելու (սոքա միշտ գիւղական դասերն են), իսկ ոմանք մի միայն այն զուարճալի ամսոյն մէջ վայելելու համար բնութեան գեղեցկութիւններն:

«Ալմաստ» եւ «Խուտո» անուամբ երկու գիւղացի աղջկունք, նոյն ամսոյ պայծառ օրուան մը մէջ իւրեանց խտրին (*) չալակած Ծիրն - Կատար կը դիմեն հաւաքելու համար բանջարեղէններ: Ար հանդիպին այնպիսի մի կանաչաւէտ տեղ յորում վայրի բոյսերը կանգուն մը բարձրութեան հասած էին. իւրեանց յոգնահար անդամները մի քիչ հանգստացնելու համար անդ կը նստին. այլ, անա՛ղ, ի՞նչ մը, որ ց'այն վայր բուսոց տակ կը սողոսկէր, յանկարծ ցատկելով կը խայթէ զԱլմաստ. սա, իւր մահուան մօտալուտ լինելն գուշակելով՝ հետեւեալ խօսքերն կը թափէ իւր կիսափակ շրթներէն իբրու վերջին հրաժեշտ իւր ազգակցաց ու սիրելեաց:

Գ. ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

Առուուն կանուխ, ուրախ դուարթ շրերս հապայ, շոպան ի ձեռս, հաց տուրիկս (1) սար զարկայ, Ումնուտուր էնք քաղել շատ կոտ մի բողկի, Որ տանէի Մուշ ծախէի եւ առնէի ճրթիկ (2) սոյիկ (3):

Գիշեր զաթի երազ տեսայ թէ մի մեծ օծ զիս կը կծէր,

Խուտո՛, դո՛ւ ալ, իմ հոգի ջան, նստած քովիկս գուլիդ ծեծէր,

Սուճն (4) իմն է, Ասուած հըմլա (5) առջեւս բերեց, եւ իմ պայծառ կարմիր արեւս շուտ խաւարեց:

(*) Պայուսակ, մախաղ.

Ո՛վ գօտեցուկ (6) դու նենգաւոր անիծեալ օձ,
ի՞նչ երեցի որ վերջ տուիր կեանքիս ոսկեղօծ.
Ո՛վ դու սողուն խաբող նախամօրն Եւայի,
իմա՛ւ (7) թաղվիմ միայնակ այս վայրըն ամայի:

Անէ՛ծք քրդի, բայց ի՞նչ կ'ասիմ, իմ անիծելն ի՞նչ
ֆայտա,
Զանի զաթի անիծելն էր մեր զօրաւոր Տէր Պապան,
Ա՛խ, Եւայ՛, ես քեզ ի՞նչ ասիմ, քու յապով (8) չէ՞ր
Որ Տէրն հրամաններ ըրաւ խէթելու մեր գարշա-
պարներ:

Ա՛խ, Խուտօջան, ես կը մեռնիմ, մի բան ունիմ
քեզ ասելիք,
Մի՛ լար, քշրեկ, մի՛ լար, քշրեկ, մի բան ունիմ քեզ
ասելիք,
Երթաս մըր գեղ, գտնաս Սագօն, իմ սրտիս աշէն
ու տիրական:
Եւ իմ պաշտպանք, իմ ապաւենք, իմ սիրուն մայրն
ու հայրեկան,

« Ասիս էնտոց փերուն սրտով թէ ձըր Ալմաստ
մեռա՛ւ, մեռա՛ւ,
« Թէ կարտով մընանց ձըրի, իր հոգին առ Աստ-
ուած թըռաւ:
« Իր խնդրէ ձըրն գալ « Երին — կատար » փորելու
համար մի սեւ հոր,
« Փորելու համար՝ իրենց հետ թըղ բերեն քանի մ'
փետուոր (9):

Վրէս թըղ չիլան, անհոգ կենան, էնդին զերար կը
տեսնինք,
Երանե՛ք թէ ես ու Սագօն հըտ յիրերար մեռնէ-
նք.....
Հասրաթ՝ չը քաշին. ի՞նչ է տունէն (10) մարդու
խակի (11) չի մնար,
Զիմ տեղ փորին, էն խաւով որ քարերն եղին՝ զուտ
մարմար:

Վա՛խ... Խուտօջան, իմ օսլտթն (12) շուտ կա-
տարիս,
Ինձ կեանք չը մնանց դահա այդ փուճ աշխարհիս,
Մօտ եկուր ինձ որ պաքնիմ գքըղի ու մեռանիմ,
Մեռնիմ... անտէր էտ քամ... պախ (13) տեղ,
մեռնիմ, մեռ...

1 Պայուսակ. 2 կանանց կօշիկներուն գարշապա-
րաց վերայ զարնուելէն հանած ձայնը. 3 կօշիկ.
4 յանցանք. 5 այդպէս. 6 ածական մը զոր Մշեցի
կանայք սովոր են տալու իւրեանց չը սիրած բանին.
7 ինչպէս. 8 համար. 9 փայտատ կրող. 10 աշխարհ.
11 երբէք. 12 պատուէր. 13 անպիտան:

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ԼՈՆՏՈՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

(ՎՈԼԹԵՌԻ ԼՈՆՏՈՆԵԱՆ ԹՂԹԱԿՑԵՆ)

Պարապ գործաւորներ — Հանգանակութիւնք. —
Հա՛ց, հա՛ց. — Առեւտրական տաքնապ. — Գերմա-
նական արտադրութիւնք. — Արքայական նուէրներ.
— Թագուհւոյն պարտութիւնը. — Կախելոց չուան-
ներ. — Դահճութեան օրհասար մը:

Պարապ գործաւորաց թիւն երթալով կը
չաւնայ, եւ որչափ ալ մեծ լինին հանգա-
նակեալ նստատներն, որք 65,000 անգլիա-
կան ոսկին կ'անցնին, հաճելի թշուառու-
թիւնը դամբան զգամ կը տարածուի բազ-
մամարդ թաղերուն մէջ:

Անոնք որ կը կարծեն թէ Հանրապե-
տութիւնն է պատճառ Ֆրանսայի ընդհա-
նուր նեղութեան, գործոց կայուն վիճա-
կին, ճարտարութեան անկման, թող ան-
գամ մը աչք նետեն իրենց երկրէն դուրս:
Պիտի տեսնեն թէ մենք տակաւին շատ ու
շատ երջանիկ ենք այլոց բաղդատմամբ:

Կայսերազարմ եւ գոռոզամիտ Գերմա-
նիան կը զեղու իւր չքաւորաց աւելորդ
բազմութեամբ եւ կը զրկէ զայնս իւր դրա-
ցիներուն ըով մուրալ անգործ պաշտօններ
կամ վար զնով աշխատութիւն: Ազնուա-
տոհմ եւ մեծափարթամ Անգլիան կ'սկսի
սոսկալ իւր թշուառաց բազմութենէն:
Հա՛ց, հա՛ց: Որովհետեւ, երկար ամիսներէ
հետէ, գործաւորներ, որք լեզէտն կը կազ-
մեն, կ'սպասեն գործարաններուն շուրջն
որոց հնոցները մարած են եւ յորս լուռ-
թիւնը կը տիրապետէ: Զիւնին եւ անձրե-
ւին տակ զոյալով, թեւերնին խաչաձեւ
իրենց կուրծքին վրայ կապած, ձեռքերնին
անութիւն տակ, գուռատ, պատառատուն
զգեստներ հագած, — տղին մէջ կը կոխկըր-
տեն, մինչդեռ ցրտասարսուռ բնակարանին
մէջ կամ ի սեամս այն տան ուսկից դուրս
ըրած են զիրենք, կինը եւ զաւակունք հա՛ց
կ'աղաղակեն: Ամիսներէ ի վեր կ'սպասեն որ
դուռը բացուի, այլ դուռը փակ կը մնայ:
« Գործ չըկայ »: Սգամբունջ յանկերգն է
այս: Արագահիւ մեքենայն լցուցած է

միջերանոցներն : Ամենուրեք աւելորդ են արտադրութիւնը :

Այն արհեստաւորներն որք դիմացած են ընդհանուր քայքայման մէջ եւ պարապ չեն թողած իրենց գործաւորներն , վերջ ի վերջոյ կ'ընկճին եւ կը հարկադրին ճանաբել իրենց պաշտօնէից մէկ մասն : Լոնտոնի մեծ տարադադործներէն մին , որ սովորաբար 7-800 գործաւոր կը գործածէր , 50 միայն պահած է : «Նրոսն տարիէ ի վեր հրապարակին վրայ եմ , կ'ըսէր ինձ , եւ երբեք տեսած չէի այսօրինակ տաղնապ մը : Անցեալ ձմեռը դժնեայ էր , այլ այսօր մէկի դէմ տասն պարապ գործաւոր կը գտնուի :»

Իրողութիւնն այն է թէ վեց ամսէ աւելի է որ ամեն ինչ կասած է , եւ բանի մը տարիէ ի վեր Լոնտոնի գործաւորաց մեծ մասը տարին հազիւ չորս ամիս կ'աշխատի :

Ինչպէս դուրս ելնել այս խորխորատէն : Սպասելով խնդրոյն լուծման , գերմանական աժան եւ առձեռն ապրանքները կը շարունակեն ողողել հրապարակներն եւ արհեստական քաղաքներն : Ի Պիրմինկհէմ , ժողովրդեան ծայրաշրջոյն թշուառութեան պատճառն ուրիշ բան չէ : Գերմանական արտադրութիւնը կը տեղան անդ այս վերջին տարիներս , անգլիացի գործաւորաց մէջը կոտորելով եւ անոնց հացը բերներնուն խելով : Գերմանածին տարադադործք , դաշնակցութեամբ կամ չահու համար , անոնց վրայ կը դրոշմեն անգլիական նշանակն եւ իրենց յաճախորդաց կը զրկեն զայնս իբր Պիրմինկհէմի արտադրութիւն :

Պէտք է խոստովանիլ թէ Տեղային Կառավարութեան Յանձնաժողովը ձեռքէն եկածը կ'ընէ , ստիպելով գաւառական իշխանութիւններն որ հանրօգուտ շինութեանց ձեռնարկեն , փոխառութիւններ կնքելու համար ամեն դիւրութիւն ընծայելով նոցա . այլ այդ շարժումն առժամանակեայ միայն կրնայ լինիլ եւ այնչափ անօգուտ որքան բարեգործական բազմաթիւ մասնախմբերն որք կազմակերպեալ են ամենուրեք՝ ձրի ճաշ տալու համար անօթիներուն :

Այդ առատաձեռնութեանց առջեւ , թագուհին ուզած չէ ետ մնալ . այլ բոլորովին կնոջական ճարտարամտութեամբ , հան-

ճարեղ միջոց մը գտած է այրւոյն լուման տալու , առանց քակելու քսակն : Ուինստորի զղեակին դարաստանը լեցուն է ճագարով . հարիւր ճագար սպաննել տալով , աղքատներուն բաշխել տուած է :

Արքային ընտանեաց անդամներէն , Էտիմպուրկի դուքսը , թագուհիէն յետոյ , ամենէն հարուստն եւ ամենէն խնայողն է : Իւր անբաղդատելի կծծութիւնը պատանեկութենէն ի վեր կը զուարճացնէ քաղաքն եւ արքունիքը : Մինչդեռ Կալէսի իշխանն 250 ոսկի ստորագրած է , բաւական խոշոր գումար մը եթէ ի նկատ առնենք իրեն եղած թախանձանքներն եւ իւր ելեւմտից անձուկ վիճակը , Էտիմպուրկի դուքսը խորհած է թէ պարապ գործաւորաց համար 50 ոսկին կը բաւէր : Իրաւ է թէ այս նուէրին վրայ բարեհաճած է աւելցնել իւր համակրութեան հաւաստիքն , զոյգ ընդ բիւրաւոր բարեմաղթութեանց :

*
* *

Վերջերս ծանուցի թէ թագուհին , որ ակներեւ համակրութիւն մը կը տածէ իւր կրտսերագոյն աղջկան ամուսին Հէնրի տը Պաթէնպէրկ իշխանին նկատմամբ , միտքը դրած էր արքունի հեծելազօրաց առաջին գունդին զօրավար ընել զայն : Բրուսիական փոխ-տեղակալէն անգլիական սպայ ըրած էր զայն եւ այսպէս միջոց կուտար չքաւոր իշխանիկին՝ երկու երեք հարիւր ոսկի աւելցնել ամուսնական պիւտճէին վրայ : Այլ սպառնացեալ գունդին տեղակալները մեծաբարբառ յայտնած էին իրենց դժգոհութիւնն , հակառակ իրենց ազնուասրտութեան : «Արդարեւ կ'ուզենք մեր մէջ առնուլ զայն , կ'ըսէին , այլ թող տա՛յ իւր բըննութիւններն եւ իւր ընկերաց պէս սանդուղին առաջին աստիճանէն սկսի վեր ելնել» : Խորհրդարանին նախընթաց աւուր նստին մէջ , Պ. Լապուէշը բացորոշապէս հարցուց պատերազմական նախարարութեան խորհրդականին թէ իրա՞ւ է որ Հէնրի տը Պաթէնպէրկ իշխանին անուանումը մերձ է , թէ այդ գերմանացի փոխ-տեղակալը սովորական քննութիւնը պիտի տա՞յ , թէ պարզապէս պատուակա՞լ պիտի լինի իւր անուանումը , եւ թէ վերջապէս ամսաթոշակ պիտի ստանա՞յ :

Այդ անխորհուրդ եւ անհաճոյ հարցմանց պատասխան տրուեցաւ թէ պատերազմական նախարարութիւնը տեղեկութիւն չունէր թագուհւոյն այդ մտադրութեան : Իւր սպայից վարմանց առջեւ, որք կ'սպառնային հրաժարական տալ, թագուհին ետ կեցաւ իւր երազէն, եւ աւասիկ ստիպուած է ընկերային ուրիշ գիւրք մը փնտռել իւր ամուսնոյն համար : Ժամանակները խիստ են եւ ժողովուրդներն ըմբոստ Այսպէս նաեւ հարկ եղաւ որ հրաժարի այն վաղեմի եւ հանգստաւէտ սովորութենէն որով ժողովուրդը կը վճարէր արքայական հարսանեաց ծախքերն, եւ յայտարարեց թէ իւր անձնական գանձէն պիտի վճարէր ամեն ինչ :

*
* *

Ճաշակները եւ գոյները տարբեր են, կ'ըսէ ազգաց իմաստութիւնն, եւ իմաստունը բնաւ զարմանալու չէ, մանաւանդ յԱնգլիա, այդ արտակարգութեանց երկիրն : Այսպէս, օրինակի համար, քանի մը տարի առաջ ներկայ գտնուեցայ կախելոց չուաններու հրապարակային աճուրդի մը : Ամեն չուանի ծայրէն կախուած էր պիտակ մը ուր դահիճն իւր իսկ ձեռքը նշանակած էր ոճրին բնութիւնը, գլխատման եղանակը եւ մահապարտին անունը : Այս կերպիւ կարելի էր աժան գնով ձեռք բերել յիշատակներ հայրասպանի մը, խեղդիչի մը, թունաւորիչ կնոջ մը : Իրենց կինը սպաննող քանի մը ոճրագործք եւս կային եւ անոնց վուշեայ փողպատներն ամենէն սուղ եւ շուտ ծախուեցան : Բազմաթիւ պարոններ, մանկամարդ եւ բանաստեղծական օրիորդներ փութացին դնել այդ նոր օրինակ « սպարները » : Աւելորդ է ըսել թէ կախելոցն ձիար սեղմող չուանի կտորներն ամենէն սուղ գնահատուեցան :

Սեպուհ մը, որ չգիտեր ինչ կերպիւ գործածել իւր հասոյթները, քանի մը տարի այս կերպով մարդասպանաց դանակներ եւ կախելոց չուաններ հաւաքելէ յետոյ, աւելի բուռն սրտայուզութիւններ փնտռած է : Արուեստին սիրով եւ շահու ամեն ակնկալութենէ զերծ, « արուեստասէր » - դահիճ եղած է, եւ այս անուամբ կը ճանչցուի Եորքայրի մէջ : Առաւօտ մը, գլխատման

պահուն, դահիճը գործի մը պատճառաւ կը հարկադրուի բացակայ մնալ. սեպուհն անմիջապէս կը ներկայանայ այդ գործը կատարելու համար : Կերեւայ թէ շատ ախորժեցաւ, որովհետեւ այդ ժամանակէն ի վեր, ամեն գլխատման ատեն, կոմսութեան պաշտօնատարներէն կը խնդրէր դահիճին փոխանորդելու շնորհ : Բան մը չէր պահանջեր, մաքրութեամբ կը գործէր, եւ այս այնքան հաճոյք կը պատճառէր որ երբէք չզլացուեցաւ իրեն այդ շնորհն, որ, վերջապէս, իրաց ներկայ անձուկ վիճակին մէջ կը թեթեւցնէր տեղային ելմտացոյցին ծախքերը : Դահիճն, որուն առատապէս ստակ կը վճարէր մեր սեպուհն, բնաւ դանգատ չէր յայտներ : Ուստի յաջորդաբար կախեց նա, հազուադիւրէ մարտարութեամբ եւ ծայրագոյն քաղցրութեամբ, երեք մարդասպաններ, երկու հայրասպաններ, երկու ամուսիններ որք իրենց կիներն ըսպաննած էին, չորս որդեասպաններ եւ երկու թունաւորիչ կանայք : Մանաւանդ կանանց առջեւ անսահման հաճոյք մը վայելել կը թուէր : Այսպիսով, կը ժողովէր անոնց, վզէն անցունելով չարաչաք չուանն, եւ երբ անոնց երեսը կը ծածկէր մահաբոյր գտակով եւ մատովը կը շարժէր զայնս յաւիտենականութեան մէջ նետող ծուղակն, կարծէր թէ հարիւր անգամ խաբուած ամուսին մ'էր որ վերջապէս կը վայելէր իւր վրէժխնդրութիւնը : Գանգատներ « ւղղուեցան Խորհրդարանին, — ամենուրեք նախանձոտներ կան —, այլ պատասխան տրուեցաւ թէ կոմսութեան պաշտօնատարք ազատ էին իրենց ուզած մարդոց յանձնել արդարութիւնն ի գործ դնելու պաշտօնը :

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն Ա Ս Ա Ց Ո Ւ Ա Մ Ք

ՊՈՒԼԱՆԸՔԻ ԼԻՋ ԳԻՒՂ

Աստուած որ կամենայ՝ կաղն ու կուր կը հարսնանայ .

Աստուած որ ձախէ՝ ինչ որ կայ տար ծախէ : Անտէր մալին տէր մ'եղնի .

Անոր հարօր ահօս կը սիրէ .

Աստուած հախ չիտայ նահախին ,

Ամեն բան բարկնալէն կը կտրի , մարդ-
հաստընալէն .

Աղէկն Աստուած է .

Անոր քառսուռն խօսք հալես՝ դրամ մը ար-
ծաթ չեղնի .

Աշխրիս մէջ սրտի սիրած .

Աղբորուտենի վախտ , աղբօր պէս , բազրի
վախտ , էլու պէս .

Ալին կիւլայինք վալին եկաւ պլուլուած .

Արեւ բանձրացաւ՝ կորեկ քաղցրացաւ .

Անոր դուլս խառախոթքի գլուխ է .

Աստուած թէ որ քօռ հնձղին անկաջ էներ՝
վարդեվրին ձուռն կը դնէր .

Աշխրիս մալ աշխարհ կը մնայ .

Ամեն մեր տուն , մենք էլու տուն .

Աղջկայ տուն տօլու զուռնա՝ տղի տուն
բան չկայ .

Ամեկ (ամեն) տկի բերնին թել մը հագրեր է .

Ամէկ ուր (իւր) տուն , լակլակ ուր բուն , խաչ
գաւազան իմ քեռու տուն .

Անոր ալ ըսին պզտի շուն վի արի .

Արջ պրակից խռովեր է , պրակ խապար
չունի .

Աղէկ գառ չախուհի համար է .

Առաջ վաճրդ էր , անձրեւ ալ եկաւ տղկաւ .

Անձրեւ էկեր համադնացեր .

Ամեն օր իծու յետքն է բաց , օր մալ մա-
քուն .

Ամեկ մարդ ուր կարպտի կորա ուր ոտք
լարելու է .

Աստուած հըտ բարուն .

Արջ կոռի լծել ընհատ (հեշտ) է , աղբ վեր-
ցուլ չաթին .

Աղջկան թողես՝ տօլին կառնէ , որ խաղայ .

Ամեկ մուրքէն մազ մը կ'եղնի մեծ մուրուք
մը .

Ան սատանաներէն չէ որ մէկ խաչ հընելով
հալածի .

Աղն է պակաս թէ մաղ .

Ալուէս հոր յընկաւ , ըսաւ . Աստուած դիս
հորէն հանէ քչի խունկ ու մում կը բե-
րեմ . երբ ելաւ՝ կը թռվրկէր , խունկ
յո՛ւստ բերեմ , մում յո՛ւստ բերեմ ,

Աղբ քանի յիրար տաս հոտ կ'երնայ .

չաւաքեց Լ . ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐԻՔ

ԹԻԻ 16. (Մասի Թիւ 3808)

» 18. » » 3810)

» 19. » » 3811)

» 20. » » 3812)

ԽՆԴԻՐ ԹԻԻ 17

ԼՈՒԾՈՒՄԸ

Նախ դիտենք թէ որ և է թիւ մը ճշ-
դիւ հաւասար է իւր փոքրագոյն եւ մե-
ծագոյն ստորապատիկներու արտադրելոյն ,
ինչպէս հաւասար է անմիջական կերպիւ
փոքրագունէն մեծ եւ մեծագունէն փոքր
ստորապատիկներու արտադրելոյն և այսպէս
հետեւաբար .

Երկրորդաբար թէ՛ ստորապատիկներու
թիւն զոյգ եղած ատեն հաւասար է երկու
միջին ստորապատիկներու արտադրելոյն :

Ուրեմն ներկայ խնդրոյն մէջ + կոչելով
տանս անծանօթ թիւն որոյ ստորապատիկ-
ներն անզոյգ են , չորրորդ այսինքն միջին
ստորապատիկն կը լինի $\frac{+}{6}$ որով կ'ունենանք

$$+ = \frac{+^2}{36}$$

հաւասարութիւնն որ կուտայ $+ = 36$:

Տանս թիւն է հետեւաբար 36 :

ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ . Բարսեղ Մ . Մկրտչեան , Աշակ . Ղալա-
թիոյ վրժինի .

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ՍՈՒՐՉԱՆԴԱԿ

14 մարտ , 1886

Անգլիոյ նոր Նախարարութիւնը չ'կրցաւ
տակաւին վերջնական կազմակերպութիւն
մ'ստանալ , կամ գէթ ազատիւ հրաժարմանց
տաղտուկներէն : Պ . Պ . Չամպրլէյն եւ Թրի-
վէլեան կը հրաժարին իրենց նախարարա-

կան պաշտօններէ, վասն զի հակադրութիւն են Պ. Կլատտոնի Իռլանտական ծրագրոյն զլիսաւոր կէտերուն :

Այս ծրագիր ապրիլի սկիզբը միայն պիտի ներկայացուի Խորհրդարանին եւ այժմ Նախարարաց Խորհրդոյն մէջ կը քննուի . բայց Լոնտոնի կարեւոր թերթերը կը ջանան կարելի եղածին չափ գաղափար մը տալ անոր պարունակութեան վրայ : Ըստ յիշեալ ծրագրոյ, Տըպլինի մէջ (մայրաքաղաք Իռլանտիոյ) Օրէնդէր Ժողով մը պիտի կազմուի եւ միւս կողմէ Իռլանտա ըստ առաջնոյն իւր ներկայացուցիչները պիտի ունենայ Լոնտոնի Խորհրդարանին մէջ : Բայց իւր երեսփոխանաց թիւը ո՛չ թէ Ժողովը դեման թուոյն համեմատութեամբ պիտի որոշուի, այլ Մեծին - Բրիտանիոյ Եւրոպոյցի մէջ Իռլանտայի հարկավճարին համեմատութեամբ, որով այդ երեսփոխանաց թիւն երեսուցի պիտի լըուցուի : Իռլանտական ոստիկանութիւնը Տըպլինի Խորհրդարանին հսկողութեան ներքեւ պիտի դրուի, սակայն զէնք չպիտի կրէ . կայսերական զօրաց միջամտութիւնն որոշեալ պարագայից համար միայն պիտի արտօնուի : Իռլանտական Խորհրդարանը զանազան սեղմումներու պիտի ենթարկուի օրինակի համար, իրաւունք չպիտի ունենայ մաքսատուրք սահմանել անգլիական ապրանքաց վրայ, օտար տէրութեանց հետ բանակցութեան մտնել, իւր տրամադրութեան ներքեւ գտնուող հաստութից միջոցաւ այս ինչ աղանդը քաջալերել ի վնաս ուրիշ աղանդի մը, եւ :

Պ. Կլատտոն մտադիր է նաեւ 120 միլիոն անգլ. ոսկւոյ ի Պետութենէ երաշխաւորեալ փոխառութիւն մը կնքել Իռլանտայի կալուածատեարց հողերն ամբողջովին գնելու համար, այնպէս որ Իռլանտական խնդրոյն մէջ ուղղակի չահ չ'ունենան այլ եւս : Գլխաւորաբար այս վերջին կէտին դէմ է ահա Պ. Չէմպլըրէյնի առարկութիւնն . նա կը փափագի որ ապահով երաշխաւորութիւններ տրուին այս 200 միլիոնի հատուցման համար . Պ. Չէմպլըրէյն չատ իսկ կը գտնէ Իռլանտական ինքնօրինութեան մը հաստատման ծրագիրն, իսկ Իռլանտացի կալուածատեարց հողերը գնելու համար 200 Միլիոնի յատկացումն, չափազանց առատաձեռնութիւն մը : Չ'հա-

ւանիր նաեւ Խորհրդարանի մը հաստատման, առաջարկեալ եղանակաւ, այլ պարզապէս Ազգային Խորհրդոյ մը կազմութիւնը կ'ուզէ, որ դաւառային իշխանութեանց հետ համախորհուրդ՝ զբաղի միմիայն Իռլանտական ներքին խնդիրներով : Պ. Թրիվլէքան եւս նմանօրինակ դիտողութիւններ ունի Կլատտոնեան ծրագրին դէմ : Ազատական նախարարապետը կ'իզայ արդէն իւր դէմ յարուցեալ եւ յարուցանելի դժուարութիւններն, եւ գուցէ իբր վերջին միջոց, Ժողովրդեան կոչում ընելու Խորհուրդ մը ունենայ, եթէ իւր ծրագիր չ'ընդունուի Խորհրդարանէն, ինչպէս երկիւղ կայ :

Գերմանիոյ Խորհրդարանը ջերմապէս զբաղած է օղիի մենափաճառի հաստատման խնդրով որոյ նախաձեռնութիւնն, ինչպէս դիւրին է գուշակել, Պիզմարք իշխանին կը պատկանի : Այս առաջարկ, որ յատուկ յանձնաժողովոյ մը ըննութեան յղուած էր, մերժուեցաւ : Նախարարապետը կանխաւ կ'ըմբռնէր թէ ծանր դժուարութեանց պիտի բաղխի այս օրէնքն ընդունել տալու համար . իւր տնտեսագիտական ծրագիր ծխախոտի եւ օղիի մենափաճառի հաստատման վրայ կը կայանար : Առաջնոյն ծրագիրն ասկէ առաջ մերժուեցաւ արդէն, գրեթէ միաձայն ընդգիմութեամբ . բայց անկից ի վեր, Պիզմարք իշխանը բարեօրէն իւր յարաբերութիւններ վատիկանի հետ, յուսաց թէ Խորհրդարանի կղերական կուսակցութիւնը տարբեր դիրք մը բռնէ իրեն նկատմամբ, գէթ ներքին խնդրոց մէջ : Սակայն այս հաշիւ չատ թերի կերպիւ իրագործուեցաւ : Իրաւ է թէ կղերական կուսակցութիւնն համեմատաբար հաշտարար ընթացք մը բռնած էր, սակայն անգոր դրտնուեցաւ այն բռնուն ընդգիմութեան առջեւ զոր յարոյց ամբողջ գերման ազգն, նոր ծրագրին դէմ : Ինչպէս որ եղած էր ծխախոտի մենափաճառի, նոյնն եւ եղաւ օղիի մենափաճառի հաստատման ծրագրին դէմ, եւ հաջարաւոր խնդրագրեր մատուցուեցան Խորհրդարանին անոր մերժումը պահանջելով :

Թէ եւ կը կարծուէր թէ Խորհրդարանական Յանձնաժողովն, առանց ընդունելու օրինական ծրագրին, չ'պիտի վարանէր գէթ

կարելիութեան սահմանին մէջ ոյժ տալ կառավարութեան, առաջարկելով որ ոգելից ըմպելեաց տրոց բարձրացում մը որոշուի, այսու հանդերձ չընդունուեցաւ նաեւ այս առաջարկ որ ազգային-ազատական կուսակցութեան անդամոց կողմէ կուգար, եւ կառավարական ծրագիրը մերժուեցաւ երկրորդ ընթերցմամբ:

Գաղափար մը տալու համար թէ ի՛նչ մեծ նշանակութիւն ունի օղիի մենավաճառի հաստատումն Գերմանիոյ նման պետութեան մը համար, բաւական է յառաջ բերել քանի մը բաղդատական թուանշաններ:

Օղիի մենավաճառն երկար ժամանակ գործադրուած է ի Ռուսիա ուր չորսական տարւոյ մայմանաժամով մասնաւոր ընկերութեանց կը յանձնէին զայն: Այս դրութեան շնորհիւ, պետական գանձն որ ժ՛կ դարուն վերջերը տարին 3,520,000 ռուբլի կը գանձէր միշտ օղիի տուրքէն, 1858ին մինչև 78,731,000 ռուբլիի գումար մը կ'առնուր: 1861 յունիս 4ին կայսերական իւքազ մը օղիի մենավաճառին տեղ հաստատեց «Ինթը» եւ կատարեալ ազատութիւն շնորհեց ոգելից ըմպելեաց պատրաստութեան: Այդ օրէն սկսեալ, օղիի տրոց հասոյթը հետզհետէ բազմացան, այնպէս որ 1880ին, 225 միլիոն ռուբլիէն նուազ չէին:

Այդ թուականին, մի և նոյն տուրքն Աւստրո-Հունգարիոյ մէջ արտադրեց 10 միլիոն 400,000 Փիօրին (28 միլիոն Փրանք) ի Ֆրանսա՝ 290 միլիոն Փրանք, յԱնգլիա՝ 14 միլիոն 800,000 ոսկի (370 միլիոն Փրանք) և ի Գերմանիա 35,517,000 մարք (44,390,000 Փրանք):

Հետեւաբար Գերմանիա համեմատաբար ուրիշ երկիրներէ (բաց ի Աւստրիայէն) ետ կը մնար այս մասին. և Պիզմարք իշխանին համալուծմն այն էր թէ ասոր պատճառը տրոց գանձման եղանակի թերութիւններն են, ուստի օղիի մենավաճառի հաստատման խորհուրդն յղացաւ, սակայն Խորհրդարանն որ վերջին տարիներս կորուսած է երկաթեայ նախարարապետեն կամաց առջեւ կուրօրէն հպատակելու սովորութիւնն, տարբեր կերպով կը խորհի:

Ֆրանսայի մէջ ալ կը յուզուի օղիի եւ

ընդհանուր առմամբ ոգելից ըմպելեաց մենավաճառի խնդիրն. Պ. Ժիւլ Բօշ երեսփոխանական ժողովին ներկայած է օրինական ծրագիր մը որով կառաջարկէ որ կառավարութիւնը միջնորդի դեր կատարէ ոգելից ըմպելեաց արտադրողին եւ սպառողին միջեւ, որով տարեկան 800 միլիոն Փրանքի հասոյթ մը պիտի ունենայ: Սպասելով այս ծրագրի ընդունելութեան, նոր ելմտացոյցին մէջ ոգելից ըմպելեաց տրոց վրայ յաւելում մ'առաջարկուած է: Այս յաւելմամբ իսկ, տարեկան 50-60 միլիոն Փրանքի գումար մը պիտի գոյանայ: Ասոր փոխարէն կառավարութիւնն օրինական յատուկ ծրագրեր պատրաստած է այդ ըմպելեաց տրոց գանձման մասին դիւրութիւններ ընծայելու համար:

Ֆրանսական խորհրդարանն անցեալ շաբթու ընդունեց օրինական ծրագիր մը որ արտօնութիւն կուտայ Փարիզ քաղաքին՝ 250 Փրանքի փոխառութիւն մը հանելու:

Միւս կողմէ, Փարիզու լրագիրք կը ծանուցանեն թէ ելմտական նախարար Պ. Սատի Գարնօ յաջողած է կարեւոր խնայողութիւններ իրագործել կառավարական Պիւտճէին մէջ: Ծովային նախարարութեան Ելմտացոյցն՝ որ կարեւորագոյնն է եւ թոնքինի ու Մատակաւարի մէջ Փրանսական թեւարկութեան հաստատման համար արտասովոր ծախուց կը կարօտի, ընդհակառակն 16 միլիոնի զեղջ մը կրած է. պատերազմական նախարարութեան Ելմտացոյցն՝ 19,800,000 Փրանք. հեռագրաց եւ թղթատարութեանց Ելմտացոյցն 6 միլիոն եւ առեւտրական նախարարութեան Ելմտացոյցն՝ 500,000 Փրանք:

Ֆրանսա իւր ուշը դարձուցած է նաեւ 1889ին Փարիզի մէջ բացուելիք տիեզերական Արուեստահանդիսին վրայ: Քրեֆէ Ֆօն-Էլի տնօրէն Պ. Քրիսթօֆլ Փարիզի երեւելի դրամատանց եւ հաստատութեանց տնօրէններն հրաւիրելով, նախնական խորհրդակցութիւն մ'ունեցաւ անոնց հետ. այդ ժողովոյ մէջ որոշուեցաւ ընկերութիւն մը հաստատել՝ կազմելու համար հարկ եղած դրամագլուխն որ պիտի ծառայէ 1889 ի Արուեստահանդիսին ծախուց,

* * *

Ներքին լրոց մէջ յիշատակութեան արժանի կարեւոր դէպքեր չիկան :

Պուլկարական խնդիրը կը մնայ միշտ նոյն վիճակին մէջ . Սղեբսանդր իշխանը կը պնդէ իւր հնգամեայ պաշտօնավարութեան վերաբերող յօդուածին դէմ, յայտարարելով թէ պուլկար ժողովրդեան միահամուռ փափագանաց կը հպատակի այս առարկութիւնը . նրա յարուցանելով թուրքօ - պուլկարական Պայմանագրոյն դէմ :

Նոյն վիճակին մէջ կը մնան նաեւ Յու-նաստան եւ մեծ Տէրութեանց նաւատորմերն ի Սուտա :

Կայս. կառավարութիւնն արտասովոր խնամք մը ցոյց կուտայ իւր ելեւմտից բարւոքման համար եւ մանաւանդ միջոցներ կը խորհի որպէս զի արտաքին փոխառութեան դիմելու հարկին մէջ չգտնուի :

Հրամանաւ Վեհ . Սուլթանին , յանձնաժողով մը կազմուեցաւ նախագահութեամբ դատական նախարար Սէրվէր փաշայի , որ տեղական ճարտարարուեստից ծաւալման միջոցները պիտի խորհի , պատրաստելով միանգամայն Կ. Պոլսոյ մէջ գեղարուեստից ցուցահանդիսի մը հաստատման ծրագիրն :

Յուսարի է որ սեպտ. 18ի յեղափոխութեամբ ծագած պալքանեան տագնապն ի մօտոյ բարեօք լուծման մը յանգելով , կայս. կառավարութիւնն առաւել եւս ազատ ժամանակ եւ միջոցներ կ'ունենայ զբաղելու վաճառականութեան եւ արուեստից զարգացման վերաբերեալ գործերով որոց ձեռնարկած է արդէն :

* * *

Ազգային ժողովն այսօր դարձեալ նիստ չըբաւ : Սակայն Խառն ժողովը քանի մը շաբաթէ հետէ կը գումարի կանոնադրապէս եւ կը տնօրինէ առաջնորդութեանց եւ մասնաւորապէս Կիլիկիոյ վիճակաց վերաբերեալ խնդիրներ : Այսօր եւս նիստ կ'ընէ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր , մասնաւորապէս քննելու համար Երուսաղեմայ վանքին ծանուցեալ դատն ընդդէմ փաստաբան Կարկուր էֆէնտիի , որ պիտի վերաբննուի նոր դատարանի մ'առջեւ :

Եգիպտոսի առաջնորդ Գեր . Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան այս չորեքշաբթի օր մեկնեցաւ մայրաքաղաքէս յիւր նոր պաշտօնատեղին :

Արժ. Խորէն վարդապետ Կիւրոյեան այս օրերս Սմաօիա կ'երթայ , վիճակին առաջնորդական ընտրութիւն կատարելու համար : Խորէն վարդապետ իւր հետ կը տանի առաջնորդական ընտրելաց հետեւեալ ցանկըն՝ Տ. Յովսէփ վարդ. Սյւվաղեան , Տ. Յակոբ վարդ. Աշոտ , Տ. Վահան վարդ. Յակոբեան եւ Տ. Գէորգ վարդ. Իւթիւճեան :

Անցեալ շաբթու իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ Յզնիկ Եպիսկոպոս Ապահունի . Արաբկիրի Գեր . Առաջնորդի իւր վիճակը մեկնելովը գոհացուցիչ կերպիւ կը փակուի կառավարական հրամանաւ Կ. Պոլիս բերել արուած երեք առաջնորդաց խնդիրն որ տարիներէ հետէ հոգ կը պատճառէր Ազգին : Պուլանքի առաջնորդական Տեղապահին իրեն դէմ եղած ամբաստանութիւններէն անպարտ արձակումն ծանուցուած է արդէն : Մշոյ Գեր . Առաջնորդն ամենայն կանոնաւորութեամբ վերստանանաւ է զիւր պաշտօնավարութիւն եւ այժմ Արաբկիրի առաջնորդական թեմն եւս կ'ազատի այդ անգլուխ եւ անխնամ վիճակէն :

Շաբթուս մէջ հրատարակեցաւ Հայաստանի եւ Փոքուն Ասիոյ Սովետոյ Կեդր. Յանձնաժողովոյն տեղեկագիրն , որ ազգային սովորական համարատուութիւններէ կը տարբերի իբրեւ պատմական եւ գրական գործ մը որոյ ամեն մէկ էջը լի է կարեւոր տեղեկութեամբ ու ծանօթութեամբ : Տեղեկագիրը կը պատմէ սովին ծագումն եւ ստացած սրտաձմիկի երեւոյթներն . Յանձնաժողովոյ կազմութիւնն եւ գործառնութեանց եղանակն . հանգանակութեանց ձեւերն եւ արդիւնքը . սովետոյ բաշխուած նպաստներուն զանազան տեսակները . կը պարունակէ հանգանակութեանց եւ բաշխմանց հաշիւներն ու ցուցակները : Ամեն ազգայնոյ համար որ փոքր ի չափէ կը հետաքրքրի Ազգին վիճակին , կ'արժէ ունենալ Տեղեկագրէն մի օրինակ : Այս անձուկ էջերու մէջ չենք կրնար աւելի խօսիլ այդ պատուական աշխատութեան վրայ որ կրնայ առանձին յօդուածի մը նիւթ մատակարարել :

Տ. Ա.

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԻՔ ԼՐԱԳՐՈՅ